VIVA MTS

2020

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

www.mts.am

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Սույն տարեկան հաշվետվությունը պատրաստել է «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») բացառապես տեղեկատվական նպատակներով: Այստեղ հնարավոր են հայտարարություններ՝ հիմնված կանխատեսվող տվյալների կամ կանխատեսումների վրա: Նման հայտարարությունները կամ կանխատեսումները վերաբերում են այնպիսի հարցերի, որոնք չեն ներկայացնում պատմական փաստեր և արտացոլում են Ընկերության մտադրությունները, համոզմունքները կամ ներկայիս ակնկալիքները գործառնությունների արդյունքների, ֆինանսական վիճակի, լիկվիդայնության, արդյունավետության, հեռանկարների, աճի տեմպերի, Ընկերության ռազմավարությունների և գործունեության ոլորտի և այլնի վերաբերյալ: Բնույթով պայմանավորված՝ հեռանկարային բնույթի հայտարարությունները և կանխատեսումները պարունակում են ռիսկ և անորոշություն, քանի որ դրանք վերաբերում են այնպիսի իրադարձությունների և կախված են այնպիսի հանգամանքներից, որոնք ապագայում կարող են ի հայտ գալ կամ չգալ: Ընկերությունը նախազգուշացնում է, որ հեռանկարային հայտարարությունները և կանխատեսումները ապագա արդյունքների երաշխիք չեն, որ Ընկերության գործունեության փաստացի արդյունքները, ֆինանսական վիճակը և լիկվիդայնությունը, ինչպես նաև Ընկերության գործունեության ոլորտի փոփոխությունները կարող են էապես տարբերվել սույն հաշվետվության մեջ պարունակվող հեռանկարային տվյալների կամ կանխատեսումների հիման վրա արված կամ ենթադրվող հայտարարություններից:

Փաստացի արդյունքների և հեռանկարային հայտարարություններում կամ կանխատեսումներում արված ենթադրությունների միջև էական տարբերություն կարող են առաջացնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ տնտեսական պայմաններն այն շուկաներում, որտեղ գործունեություն է ծավալում Ընկերությունը մրցակցային միջավայրը և տվյալ շուկաներում գործունեություն ծավալելուն առնչվող ռիսկերը, ոլորտում, ինչպես նաև հարակից ոլորտներում կատարվող շուկայական փոփոխությունները, Ընկերության և վերջինիս գործունեության վրա ազդող այլ ռիսկեր:

Ընդ որում, նույնիսկ եթե Ընկերության գործունեության արդյունքները, ֆինանսական վիճակը և լիկվիդայնությունը, ինչպես նաև Ընկերության գործունեության ոլորտի փոփոխությունները համահունչ են սույն հաշվետվության մեջ ներկայացված հեռանկարային տվյալների կամ կանխատեսումների վրա հիմնված հայտարարություններին, այդպիսի արդյունքները և փոփոխությունները չեն կարող հանդիսանալ արդյունքներ կամ փոփոխություններ հետագա ժամանակաշրջանների համար: Ընկերությունը պարտավորություն չի ստանձնում վերանայելու կամ հաստատելու ակնկալիքները, գնահատումները կամ թարմացնելու հեռանկարային բնույթի հայտարարությունները կամ կանխատեսումները՝ սույն հաշվետվության ամսաթվից հետո տեղի ունեցած կամ ի հայտ եկած իրադարձություններն ու հանգամանքներն արտացոլելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

01 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

05 ՏԱՐՎԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

06 ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

08 ՎԻՎԱ-ՄՏՍ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՍԼԱԿԱՆԸ

08 ՄԵՐ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

09 ՎՊ-ԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13 ՄԵՐ ԲԻԶՆԵՍՆ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱՑՔԻՑ

14 ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՐՔ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

16 ՄԵԾ ՏՎՅԱԼՆԵՐ (BIG DATA)

16 ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՃԱՌՔԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ

17 ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒՄ

18 ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ և ՀԱՏՈՒԿ ԱՋԱԿՑՈՒՄ

18 ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԱՆՑՈՒՄ ԴԵՊԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԲԱՁՄԱԿԻ ԿԱՊՈՒՂԻՆԵՐ)

19 ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

19 ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՈՄԵՐՑԻԱ

20 ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

22 2020 Թ. ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

24 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31 ԲԻԶՆԵՍ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

33 ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

38 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

39 ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ/ ՄԵՐ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

42 ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

44 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

44 ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

44 ԿԱՊ ՍՈՑՑԱՆՑԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վիվա-ՄՏՍ (գործունեության սկզբում՝ «ՎիվաՍել») ընկերությունը («ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ) գործունեություն իրականացնելու արտոնագիր է ստացել 2004 թվականին: Գործունեությունը սկսելով 2005 թվականին փոքրաթիվ կազմով՝ գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի ղեկավարությամբ, թիմն իր առջև նպատակ էր դրել հնարավորինս սեղմ ժամկետներում բջջային ընդարձակ ցանց ապահովել ամբողջ հանրապետությունում ու սկսել ծառայություններ մատուցել:

Վիվա-ՄՏՍ-ի ներցանցային առաջին զանգը կատարվեց 2005թ.-ի հուլիսի 1-ին՝ նոր դարաշրջանի սկիզբ ազդարարելով Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում: Վիվա-ՄՏՍ-ի մուտքով Հայաստանում ավարտվեց բջջային կապի մենաշնորհը, սկիզբ առավ մրցակցությունն ու կարճ ժամանակահատվածում հիմնովին փոխվեց ոլորտում տիրող պատկերը: Վիվա-ՄՏՍ-ի առաջարկած բարձր որակի, մատչելի սակագների, հուսալիության և ընդարձակ ծածկույթի շնորհիվ, GSM ծառայությունները կարճ ժամանակահատվածում հասանելի դարձան Հայաստանի բնակչությանը:

2006թ.-ին Վիվա-ՄՏՍ-ը շարունակում է զարգացնել ոչ միայն ցանցը, այլև՝ կազմակերպական կառուցվածքը: Կազմակերպության երկարաժամկետ ծրագրերի հիմքում բաժանորդներին ընձեռվող հնարավորությունների և մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն էր: Աշխատանքներ էին տարվում բջջային ցանցի ընդարձակման և մարդկային ռեսուրսների հավաքագրման արդյունավետ քաղաքականության կիրառման ուղղությամբ: 2006 թվականի հունվարի դրությամբ, Ընկերությանը հաջողվում է գրավել շուկայի մասնաբաժնի 50 տոկոսը (ավելի քան 350 000 բաժանորդ): Նույն թվականի սեպտեմբերին Ընկերության բջջային ցանցը հասանելի էր երկրի բնակեցված տարածքի 90 տոկոսում:

Նոր ռազմավարությանը, նպատակների սահմանմանը, ընդհանուր կորպորատիվ առաքելության ձևակերպմանը զուգահեռ, մշակվում է նաև Վիվա-ՄՏՍ-ի կազմակերպական նոր կառուցվածքը:

2007 թվականին Ընկերությունը գրանցեց զարգացման զգալի առաջընթաց և բաժանորդային բազայի աճ. Վիվա-ՄՏՍ-ի ծառայություններից օգտվողների թիվը գերազանցում է 1 միլիոնը: Զուգահեռաբար ավելանում է աշխատակիցների թիվը:

2008 թվականին իրականացված քոբրենդինգի արդյունքում փոխվեց Ընկերության ապրանքանշանը. «ՎիվաՍել»-ը դարձավ «ՎիվաՍել-ՄՏՍ»: Այդ տարվա ընթացքում Ընկերությանը նաև հաջողվեց գրավել շուկայի զգալի մասնաբաժինը՝ գերազանցելով 78 տոկոսը: 2009 թվականի ապրիլին Վիվա-ՄՏՍ-ն ազդարարեց երրորդ սերնդի (3G) ցանցի կոմերցիոն մեկնարկը: Հայաստանում առաջին անգամ իրականացվեց 3G ցանցի գործարկում մարզերում: Առաջին անգամ նաև իրականացվում է 3G ցանցի ապահովում Երևանի մետրոյի տարածքում:

Արդիականացված ցանցը բաժանորդներին հնարավորություն ընձեռեց օգտվելու Վիվա-ՄՏՍ-ի նորարարական այնպիսի ծառայություններից, ինչպիսիք են տեսազանգն ու շարժական գերարագ ինտերնետը:

Բջջային հեռահաղորդակցության ոլորտում Վիվա-ՄՏՍ-ի հաջողությունները պայմանավորված են գործունեության հետևյալ սկզբունքով. բջջային ծառայությունները պետք է հասանելի լինեն ոչ թե սահմանափակ թվով մարդկանց, այլ՝ յուրաքանչյուրին: Արտասահմանյան օպերատորների հետ ռոումինգային գործընկերության շնորհիվ, Վիվա-ՄՏՍ-ը հայրենիքի հետ կապ պահպանելու հնարավորություն է տալիս իր բաժանորդներին՝ անկախ գտնվելու վայրից: Վիվա-ՄՏՍ-ն ունի 529 ռոումինգ գործընկեր՝ աշխարհի 192 երկրում: 2007 թվականի սեպտեմբերին, բաժնետոմսերի 80 տոկոսի վաճառքից հետո, Ընկերությունը դարձավ ԱՊՀ տարածքում հեռահաղորդակցության խոշորագույն ընկերություններից մեկի՝ ռուսաստանյան «Մոբիլնիյե Տելեսիստեմի»

192
Երկիր

529
Ռոումինգ գործընկեր

Վիվա-ՄՏՍ-ը 2010 թվականին Հայաստանում առաջին անգամ գործարկեց 4G/LTE ցանցը: Այն բաժանորդներին հնարավորություն է տալիս օգտվելու ինտերնետի անհամեմատ ավելի բարձր արագությունից և աշխատելու առավել բարձր արդյունավետությամբ: Որպես պատասխանատու կորպորատիվ քաղաքացի՝ Ընկերությունը բազային կայաններ տեղադրելու որոշում կայացնելիս չի առաջնորդվել բացառապես ներդրումների վերադարձելիության սկզբունքով: Վիվա-ՄՏՍ-ի համար հավասարապես սոցիալական և անվտանգության խնդիր է փոքրաթիվ բնակչությամբ և ծառայությունների սպառման փոքր հնարավորությամբ ամենահեռավոր շրջաններում անգամ հաղորդակցության հուսալի ենթակառուցվածքի ապահովումը:

Հիմնադրման օրվանից, Վիվա-ՄՏՍ-ի բոլոր աշխատակիցների համար կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ) եղել և մնում է ոչ միայն հայեցակարգ, այլև՝ ամենօրյա գործելակերպ: Վիվա-ՄՏՍ-ը Հայաստանում առաջին ընկերությունն է, որը ներկայացրել և կիրառել է ԿՍՊ-ն՝ որպես կառավարման մոդել, և առաջին օպերատորն է, որն առաջնորդվում է սոցիալական պատասխանատվության միջազգային ISO 26000 ուղեցույցներով:

Գործունեության ընթացքում, ԿՍՊ ռազմավարության շրջանակներում, Վիվա-ՄՏՍ-ն ավելի քան 29 միլիարդ դրամ է հատկացրել Հայաստանում սոցիալական ներդրումներ իրականացնելու նպատակով՝ հետևյալ ոլորտների բարելավման և կայուն զարգացման ուղղությամբ.

- Առողջապահություն,
- մշակույթ,
- կրթություն,
- սպորտ,
- շրջակա միջավայր,
- խմելու և ոռոգման ջրագծեր, ներառյալ՝ սահմանամերձ համայնքներում,
- բնակարանաշինություն սահմանամերձ համայնքներում,
- այլընտրանքային էներգիայով սնուցվող՝ ջեռուցման ու լուսավորման LED-համակարգեր,
- կամավորություն,
- հատուկ կարիքներով երեխաներ,
- բնակարանների տրամադրում աղետի գոտու 40 անտուն ընտանիքի,
- աջակցություն տեղեկատվական ու հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի, ներառյալ՝ ստարթափների

Վիվա-ՄՏՍ-ն ունի սեփական օպտիկամանրաթելային մալուխների ցանց, որը ձգվում է Հայաստանի հյուսիսից՝ հարավ: Ընկերությունն ինտերնետը ներկրում է իր սեփական օպտիկամանրաթելային կապուղիներով՝ ներքին շուկայի կարիքների համար: 2012 թվականին Վիվա-ՄՏՍ-ն ամրապնդեց իր դիրքերը նաև ֆինանսավճարային ծառայությունների շուկայում: Թողարկելով «ՄոբիԴրամ» էլեկտրոնային դրամապանակը, իսկ 2016 թվականին՝ նաև «ՄոբիԴրամ» բջջային հավելվածը՝ հաճախորդին հնարավորություն է ընձեռվել կատարելու անհպում ապահով վճարումներ՝ սմարթֆոնի միջոցով: Այսօր Վիվա-ՄՏՍ-ի առցանց խանութում ցանկացած սարք գնելիս վճարումը նույնպես կարելի է կատարել «ՄոբիԴրամ»-ով:

Վիվա-ՄՏՍ-ն անցել է մարտահրավերներով հարուստ ուղի՝ իր բջջային հզոր ցանցը հասանելի դարձնելով բնակչության 99.8%-ին: 2014 թվականին Վիվա-ՄՏՍ-ի բջջային ինտերնետի բաժանորդների թիվը հասնում էր 1 միլիոնի և Ընկերությանը բաժին է հասնում շուկայի մասնաբաժնի ավելի քան 60%-ը:



Մեծ կարևորություն տալով տեղեկատվական անվտանգությանը՝ Ընկերությունը դարձել է առաջին օպերատորը, որը ներդրել է տեղեկատվական անվտանգության կառավարման ISO/IEC 27001:2013 միջազգային ստանդարտը (2015 թվականին): Այսօր ևս, այդ ստանդարտը հանդիսանում է Ընկերության կառավարման կարևոր մաս: 2017-ին Վիվա-ՄՏՍ-ը մուտք է գործում B2B ֆիքսված կապի շուկա: Ընկերությունը ներկայումս տրամադրում է ֆիքսված VoIP ծառայություններ, ֆիքսված լայնաշերտ ինտերնետ և տվյալների փոխանցում, համատեղակայում և կապուղիների տրամադրում:

Վիվա-ՄՏՍ-ի կողմից լայնաշերտ ինտերնետի մատակարար, օպտիկամանրաթելային սեփական ցանց ու տեխնոլոգիական հզորություններ, ինչպես նաև բաժանորդային զգալի բազա ունեցող «ADC» ընկերության ակտիվների ձեռքբերումը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտի խոշորագույն գործարքներից էր: Արդյունքում, Վիվա-ՄՏՍ-ը զգալիորեն ընդլայնել է լայնաշերտ ֆիքսված ինտերնետի ու հարակից ծառայություններից օգտվող իր բաժանորդների բազան, որը ներառում է իրավաբանական անձանց, մասնավոր/կորպորատիվ սեկտորի ընկերություններ, պետական ու համայնքային կառույցներ:

Դեռևս ընթացքի մեջ է Վիվա-ՄՏՍ-ի թվային փոխակերպման գործընթացը, որի արդյունքում Ընկերությունն իր բաժանորդների առօրյան ավելի հեշտ ու պարզ դարձնելուն ուղղված նշանակալի քայլեր է կատարում: Այսպես, 2017 թվականին Վիվա-ՄՏՍ-ը թողարկել է «Իմ Վիվա-ՄՏՍ» բջջային հավելվածը, որը բաժանորդների կարիքներին համապատասխանեցված պարզ լուծում է և թույլ է տալիս բաժանորդին բջջայինի միջոցով վերահսկել հաշվեկշիռը, ընտրել հաղորդակցության անհատական կարիքներին առավել համապատասխան սակագնային պլաններ և ծառայություններ, ակտիվացնել/ապաակտիվացնել օգտագործվող ծառայությունները և այլն:

Տարիների ընթացքում Վիվա-ՄՏՍ-ն արժանացել է մի շարք պարգևների ու մրցանակների:

Տնտեսական և սոցիալական միջավայրի նկատմամբ ցուցաբերած բարձր պատասխանատվության շնորհիվ, 2018 թվականին Վիվա-ՄՏՍ-ին հաջողվել է Հայաստանում առաջին անգամ ներկայացնել ԿՍՊ հաշվետվություն՝ Համաշխարհային հաշվետվությունների նախաձեռնության (Global Reporting Initiative) ստանդարտներին համապատասխան:

2018 թվականին Ընկերությունը հզորացրել է ամպային ենթակառուցվածքներն ու ներկայացրել #CloudMTS ծառայությունը: Միաժամանակ, Վիվա-ՄՏՍ-ն առաջին օպերատորն է Հայաստանում, որը ձեռք է բերել ISO 37001 և ISO 19600 հակակոռուպցիոն և համապատասխանության համակարգերի միջազգային ստանդարտներին համապատասխանության վկայական:

2019 թվականին Վիվա-ՄՏՍ-ը 22 վարչապետի աշխատակազմի հետ կնքել է համագործակցության հուշագիր՝ հակակոռուպցիոն և ներքին բարեվարքության համակարգի ներդրման շուրջ: 2019 թվականի օգոստոսին «ՄՏՍ» ՀԲԸ-ն ձեռք է բերել Վիվա-ՄՏՍ-ի բաժնետոմսերի մնացած 20 տոկոսը: Շարունակելով ընդլայնել իր թվային ծառայությունները՝ 2019 թվականին Վիվա-ՄՏՍ-ը՝ «Շանթ» ՀԸ-ի հետ համատեղ, թողարկել է «ՄՏՍ TV» HD ալիքների հայկական հավելվածը, որը նոր խոսք է հայերեն բովանդակությունն առավել հասանելի դարձնելու գործում: Հավելվածը հնարավորություն է տալիս սմարթֆոնը վերածելու լիարժեք հեռուստացույցի և դիտելու հայկական և արտասահմանյան մի շարք հեռուստաալիքներ և սերիալներ HD որակով՝ Վիվա-ՄՏՍ-ի 3G և 4G/4G+ ցանցերի ծածկույթում, ինչպես նաև՝ Wi-Fi-ի միջոցով:

2020 թվականի սկզբին Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորն իրականացրել է կորպորատիվ տարբերանշանի ոճային փոփոխություն: Նորացված տարբերանշանը շեշտադրում է Ընկերության ռազմավարական ուղղվածությունը դեպի երիտասարդությունն ու թվային աշխարհը՝ համարձակ ու կենսախինդ: Բաժանորդների համար տարիների ընթացքում հարազատ դարձած «Վիվա»-ն՝ Ընկերության ինքնության հիմքն ու խորհրդանիշը, ինչպես միշտ, շարունակում է մնալ անփոփոխ:

Առաջին անգամ Հայաստանում, Վիվա-ՄՏՍ-ի կողմից ստեղծվել են սակագնային պլաններ՝ գնային տարբեր սեգմենտներում, որոնց բաժանորդները՝ կախված սակագնային պլանից, հնարավորություն ունեն անսահմանափակ օգտվելու մի շարք մեսինջերներից և հավելվածներից՝ ակտիվ փաթեթներ ունենալու դեպքում: Խոսքը վերաբերում է այնպիսի հավելվածների, որոնք դարձել են ժամանակակից մարդու առօրյա շփումների անբաժանելի մասնիկը՝ «Zoom», «Skype», Twitter, «Viber», «WhatsApp», «Messenger», «Facebook», «Telegram», «Zangi», «YouTube», «TikTok», «Snapchat», «Netflix» և «Instagram»: Այս լուծումները հատկապես օգտակար էին 2020 թվականի ընթացքում՝ COVID-19-ի հետևանքով հեռավար աշխատանքի և ուսուցման ճիշտ կազմակերպման համար:

Այսպիսով, Վիվա-ՄՏՍ-ն այսօր շուկայում առաջարկում է շատ ավելին, քան պարզապես

ձայնային ու տվյալների փոխանցման ծառայություններն են, այդ թվում նաև՝ մի շարք խաղային, ժամանցային, ուսուցողական հավելվածներ, էլեկտրոնային դրամապանակ, բջջային հեռուստատեսություն, ամպային ծառայություններ և օգտակար լուծումներ՝ բիզնեսի ու ֆինանսների արդյունավետ կառավարման համար և այլն:

Ներկայում Ընկերությունը թվային փոխակերպման (digital transformation) փուլում է, որը ենթադրում է անցում հեռահաղորդակցության օպերատորից դեպի թվային համալիր ծառայություններ առաջարկող ընկերության, ինչը համահունչ է ոլորտի զարգացման համաշխարհային միտումներին, ինչպես նաև՝ բաժանորդների աճող կարիքներին ու ակնկալիքներին:

2005 թվականից մինչ օրս, Վիվա-ՄՏՍ-ը պետությանը վճարել է ավելի քան 258 միլիարդ դրամի հարկ: Ընկերությունը հեռահաղորդակցության ոլորտը ներկայացնող ամենամեծ հարկատուն է և խոշոր հարկատուների աղյուսակում մշտապես զբաղեցնում է ամենաբարձր հորիզոնականները:
Վիվա-ՄՏՍ-ն այսօր ունի սպասարկման ընդարձակ ցանց՝ 72 սպասարկման կենտրոն՝ Երևանում ու մարզերում, որտեղ տեղակայված են նաև ՄոբիԴրամ-ի մասնաճյուղերը:
Ներկա դրությամբ, Ընկերությունն ունի 1200 աշխատակից և ավելի քան 2 միլիոն բաժանորդ:

- պետությանը վճարված հարկեր
258 ՄԻԼԻԱՐԴ 22 ԴՐԱՄ

- սպասարկման կենտրոններ Երևանում և մարզերում
73

- բաժանորդներ
2 ՄԻԼԻՈՆ

- աշխատակիցներ
1200

ՏԱՐՎԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համավարակը ցույց տվեց, որ հեռահաղորդակցության ոլորտը Հայաստանում և ամբողջ աշխարհում դարձել է սովորական ապրելակերպի կարևոր մաս: Հեռավար աշխատանք, կրթություն և բժշկություն. այս բոլոր ոլորտներն էլ հիմնականում կախված են հեռահաղորդակցության ընկերությունների առաջարկներից, իսկ Covid-19-ի հետևանքով ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ 2020 թվականի մարտից ավելացավ առցանց ծառայությունների սպառումը:

Վիվա-ՄՏՍ-ն առաջինն էր ոլորտում, որ սոցիալական պատասխանատվության տեսանկյունից վերանայեց «X», «Y» և «Z» սակագնային պլանների ծառայությունների մատուցումը, ինչպես նաև առօրյայի անբաժանելի մաս դարձած առցանց կրթության և հավելվածների ծառայությունները՝ տրամադրվելով անսահմանափակ մուտք «Zoom», «Skype», «Telegram», «Twitter», «Viber», «WhatsApp», «Messenger», «Facebook», «Zangi», «YouTube», «TikTok, «Snapchat», «Netflix» և «Instagram» ծրագրերին: Վիվա-ՄՏՍ-ը զգալի սոցիալական աջակցություն ցուցաբերեց նաև կրթության ոլորտում:

2020 թվականը շատ ծանր տարի էր Հայաստանի համար. սեպտեմբերի վերջին սկսվեցին լայնածավալ ռազմական գործողությունները, և այս ընթացքում Վիվա-ՄՏՍ-ն առաջինն էր, որ անվճար զանգեր տրամադրեց դեպի Արցախ, իսկ մրցակիցները հետևեցին Ընկերության քայլին:

2020 թվականի երկրորդ եռամսյակում Վիվա-ՄՏՍ-ը գործարկել է նոր ամպային հարթակ և ամպային ծառայություններ, ինչպիսիք են «IaaS»-ը, «Veeam»-ի կրկնօրինակը և «VPBX»-ը: 2020 թվականին ամպային ծառայություններից օգտվողների թիվը 2019 թվականի համեմատ աճել է 500%-ով:

Երևանում և մի շարք մարզերում հասանելի ֆիքսված ինտերնետի կապը արդիականացվել է՝ բավարարելու մեծ պահանջարկը: Ընկերությանը հաջողվել է հինգ անգամ ավելացնել իր կապուղու հզորությունը Վրաստանի հետ սահմանին, որպեսզի բավարարի ֆիքսված կապի ծառայությունների աճող պահանջարկը: Չնայած ամբողջ B2B սեգմենտի վրա COVID-19-ի ազդեցության հանգամանքին, Ընկերությանը հաջողվել է ավելացնել ֆիքսված ծառայությունների բաժանորդագրությունների թիվը 25%-ով: Ընկերությունը սկսել է ակտիվորեն զարգացնել ամպային ենթակառուցվածքի և վիրտուալ տարածության վրա հիմնված նոր ապրանքատեսակներ և ծառայություններ, որոնք առավելագույնս պահանջված են կորպորատիվ հաճախորդների կողմից: Վիվա-ՄՏՍ-ը ձգտում է զարգացնել և ներկայացնել ժամանակակից բիզնեսի համար անհրաժեշտ ծառայությունների ամբողջական փաթեթ և, չսահմանափակվելով բջջային և ֆիքսված կապով, տրամադրում է նաև արագ զարգացող ձեռնարկությունների համար անհրաժեշտ մի շարք SS ծառայություններ և հարթակներ:

Վիվա-ՄՏՍ-ը նախատեսում է գործարկել «NB-IOT», մուտք գործել այս շուկա և մշակել «NB-IOT»-ի վրա հիմնված ծառայությունների մատուցման հարթակ: Հաշվի առնելով SaaS ծառայությունների մեծ պահանջարկը՝ Վիվա-ՄՏՍ-ը պատրաստ է առաջին անգամ Հայաստանում գործարկել «Microsoft Azure Stack»-ը:

Չնայած համավարակին և ռազմական դրությանը, 2020 թվականին Ընկերությանը հաջողվել է օպտիմալացնել ծախսերը և պատշաճ արդյունքներ ցույց տալ բիզնեսի հիմնական ոլորտներում:

ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՔԱՅԼ ԴԵՊԻ ԱՊԱԳԱ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականը Ընկերության համար ամենադժվար ժամանակահատվածն էր՝ հիմնադրումից ի վեր: Ոչ միայն COVID-19-ը մեզ բոլորիս կանգնեցրեց մարդկային և մարդասիրական աննախադեպ մարտահրավերների առաջ, այլնաև պատերազմն իրական սպառնալիք դարձավ մեր հայրենիքի, ընտանիքների և ողջ ազգի համար: Այս հարցում մենք համատեղեցինք մեր ջանքերը՝ ստեղծելու ավելի մեծ արժեք և շարունակելու հաղթահարել մեր առջև դրված դժվարությունները:

Մեր ապրանքատեսակներին և ծառայություններին ավելի շատ նորամուծություններ ավելացնելով՝ մենք ձգտում ենք մեր բաժանորդների առօրյան դարձնել ավելի հարթ և հեշտ: Բարելավելով մեր թիմի հմտություններն ու գիտելիքները՝ մենք ամրապնդում ենք մեր մրցակցային առավելությունը շուկայում և զարգացնում մեր մարքեթինգային ռազմավարությունը:

Դժվարությունները հսկայական են, սակայն ավելի քան 1200 առաջադեմ և խելացի աշխատողների և ավելի քան 2 միլիոն բաժանորդների օգնությամբ մենք համախմբվում ենք՝ հաղթահարելու մարտահրավերները և դրանք վերածելու նոր հնարավորությունների:

ՀԱՄԱՎԱՐԱԿԸ

COVID-19 համավարակը շատ անորոշություններ առաջացրեց, և մենք՝ որպես ընկերություն, արագորեն արձագանքեցինք՝ պաշտպանելով մեր աշխատակիցներին և անցնելով աշխատանքի նոր ռեժիմի, որը նույնիսկ բիզնեսի շարունակականության ամենածայրահեղ ծրագրերով նախատեսված չէր: Տանից աշխատելու այս լայնածավալ փորձը մեզ օգնեց հասկանալ գրասենյակների դերը աշխատանքում, և մենք փորձեցինք ավելի ստեղծագործ և համարձակ կերպով մոտենալ աշխատանքի կազմակերպման հարցին: Եվ, իհարկե, առաջին քայլը պետք է լիներ աշխատանքային գործընթացի վերակազմակերպումը, քանի որ մեկուսացման շրջանում մենք ձգտել ենք գտնել համագործակցության և գործընկերության ավելի ակտիվ և արդյունավետ ուղիներ և ապահովել ամենակարևոր գործընթացների հեռավար իրականացումը:

ՔԱՅԼ ԴԵՊԻ «ԹՎԱՅԻՆ» ԱՊԱԳԱ

Մենք գնում ենք դեպի «թվայնացում» և համարձակ քայլերով մեր գործունեության շրջանակին ավելացնում ենք թվային ծառայություններ: Սա նշանակում է, որ Ընկերության ռազմավարության հիմքում ոչ միայն ձայնային և տվյալների փոխանցման ծառայությունների մատուցումն է, այլ նաև SS լուծումների, ապրանքատեսակների և հավելվածների բազմազանությունը: Վիվա-ՄՏՍ-ը, լարված մրցակցության պայմաններում պահպանելով բջջային կապի շուկայի մոտ 60%-ը, ունի ռազմավարական զարգացման յուրահատուկ մոդել:

Վիվա-ՄՏՍ-ի կարևոր առաքելությունն է աջակցել այն ստարթափներին, որոնք հանդես են գալիս յուրահատուկ նորարարական գաղափարների ներդրմամբ և մշակմամբ: Ըստ այդմ, այսօր Վիվա-ՄՏՍ-ն առաջարկում է մի շարք ժամանցային ծառայություններ, առողջ ապրելակերպի և կրթական հավելվածներ, էլեկտրոնային դրամապանակ, բջջային հեռուստատեսություն, ամպային ծառայություններ և շատ այլ օգտակար լուծումներ ՝ բիզնեսի և ֆինանսների արդյունավետ կառավարման համար և այլն:

ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

«X», «Y» և «Z» սակագնային պլանների 2018-2019 թվականներին մշակված նոր ապրանքային շարքը պարբերաբար թարմացվում է՝ առաջարկելով նորություն և նորարարություն: Այսօր մենք առաջարկում ենք «Zoom», «Skype», «Viber», «WhatsApp», «Facebook», «YouTube», «Tiktok», ինչպես նաև մեր առօրյայի անբաժանելի մաս դարձած ամենատարածված թվային շատ այլ հարթակների անսահմանափակ օգտագործում:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը Վիվա-ՄՏՍ-ի առաքելության առանձնահատուկ մասն է: Վերջին 15 տարիների ընթացքում Ընկերությունը հսկայական ներդրումներ է կատարել հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների բարելավման ուղղությամբ: Սոցիալական ներդրումների շրջանակում Ընկերությունը նաև կիրառում է նորարարական լուծումներ, մասնավորապես՝ մարզերում, ներառյալ՝ սահմանամերձ համայնքներում ներդնելով այլընտրանքային էներգիայով սնուցվող՝ լուսավորության ու ջեռուցման ժամանակակից ու ծախսարդյունավետ համակարգեր:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Վիվա-ՄՏՍ-ն ունի պատասխանատվության և նվիրվածության բարձր զգացում իր աշխատակիցների նկատմամբ: Բաց լինելու պատրաստակամության, գործընկերության և գործարար բարեվարքության սկզբունքների հիման վրա ժամանակի ընթացքում ձևավորվել են Վիվա-ՄՏՍ-ի վարվելակերպի կանոնները: Վիվա-ՄՏՍ-ի և նրա աշխատակիցների միջև երկարաժամկետ վստահության հիմքում Ընկերության անթերի գործարար էթիկան է՝ հիմնված խստագույն կերպով օրենսդրության պահպանման, համաշխարհային լավագույն փորձի և բիզնեսավարման բարձր չափանիշների վրա: Ունենալով կայացած կորպորատիվ մշակույթ և կորպորատիվ արժեքներ՝ Վիվա-ՄՏՍ-ն առաջնորդում է՝ օրինակ ծառայելով մյուսներին: Ընկերությունը խրախուսում է ընդունել էթիկական սկզբունքները և կանոնակարգերը, որոնք դարձել են մեր առօրյա գործունեության անբաժան մասը:

ՀԱՃԱԽՈՐԴԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ

Վիվա-ՄՏՍ-ի բաժանորդների թիվը գերազանցում է 2 միլիոնը, և նրանցից յուրաքանչյուրը հսկայական ազդեցություն ունի մեր բեկումնային հաջողության և կայացած կազմակերպություն դառնալու գործում: Նրանց վերաբերմունքը՝ հավատարմությունն ու վստահությունը, համակրանքն ու քննադատությունը, գնահատանքն ու պահանջկոտությունը, օգնել են, որպեսզի մենք դառնանք այն, ինչ այսօր կանք:

ՄԵՐ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

Aramayo Investments Limited

ՎԻՎԱ-ՄՏՍ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Ընկերության առաքելությունը

Իր հիմնադրման օրվանից, Վիվա-ՄՏՍ-ը հայաստանյան շուկա է մտել հստակ առաքելությամբ՝ աշխարհը մոտեցնել Հայաստանին և Հայաստանը կապել աշխարհին: Ցուցաբերելով մեծ նվիրում և ձգտում՝՝ Ընկերությունը շարունակում է հավատալ այս տեսլականին իր գործունեության բոլոր ուղղություններում, ներառյալ՝ նոր ծառայությունների, հնարավորությունների և ապրանքատեսակների մշակումն ու ներդրումը:
Ներկայում Ընկերությունը թվային փոխակերպման (digital transformation) փուլում է՝ հեռահաղորդակցության օպերատորից դեպի թվային համալիր ծառայություններ առաջարկող ընկերություն, որի գործառույթների շրջանակը շատ ավելին է, քան հեռահաղորդակցային ծառայությունների տրամադրումը՝ նպատակ հետապնդելով բավարարել իր շահառուների, մասնավորապես՝ իր բաժանորդների կարիքներն ու պահանջները:

Մեր տեսլականը

Մեր տեսլականն է գործել սոցիալապես պատասխանատու ձևով: Մենք իրականացնում ենք մեր բիզնեսը՝ բավարարելով մեր շահառուների պահանջները, հետևելով գործարար էթիկայի սկզբունքներին և գործադրելով ամեն ջանք կայուն զարգացման համար: Մեր ձգտումն է ընկալվել որպես Հայաստանի առաջատար սոցիալապես պատասխանատու ընկերություն՝ համապատասխանելով մեր շահառուների ակնկալիքներին: Մենք ձգտում ենք Հայաստանը կապել ապագային: Մեր նպատակն է ստեղծել, առաջնորդել և պատուհան բացել դեպի ապագա:

ՎՊ-ԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆինանսների և հաշվապահության վարչության պետ

ԱՐԹՈՒՐ ԵՐՄԱԼՅՈՆԱԿ

Պաշտոնավարում է 1 տարի
(2020 թվականի փետրվարից)

Արթուր Երմալյոնակը պատասխանատու է բյուջեի պլանավորման և վերահսկման, ներդրումային և կոմերցիոն նախաձեռնությունների վերլուծության, դեբիտորական պարտքերի կառավարման, եկամուտների ապահովման, խարդախությունների կանխարգելման, «SOX» վերահսկողության միջոցների, բանկային և կանխիկ գործառույթների իրականացման և հաշվապահական հաշվառման վարման համար: Նա հետևում է գործընթացների արդյունավետության բարձրացմանը՝ Ընկերության ռազմավարությանը համապատասխան:

Բաժանորդների սպասարկման վարչության պետ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՖԵԴՅՈՒՆԻՆ

Պաշտոնավարում է 6 տարի
(2015 թվականի օգոստոսից)

Ալեքսանդր Ֆեդյունինը պատասխանատու է Ընկերության վաճառքի և սպասարկման ռազմավարությունը սահմանելու և բաժանորդների հետ փոխգործակցության բոլոր կետերում դրա իրականացմանը հետևելու համար: Նա նաև վերահսկում է հաճախորդների աջակցման բաժնի և սպասարկման կենտրոնների սպասարկման որակի ապահովումը, ղեկավարում և վերահսկում է Ընկերության կոմերցիոն ռազմավարության մշակումն ու իրականացումը՝ արդյունքների հասնելու համար, ապահովում է Հաճախորդների սպասարկման բաժնի գործունեության բոլոր գործառույթների արդյունավետ կատարումը՝ Ընկերության առաքելությանը, արժեքներին և ռազմավարական նպատակներին համապատասխան:

Տեխնիկական վարչության պետ

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պաշտոնավարում է 2 տարի
(2019 թվականի մայիսից)

Գրիգոր Գրիգորյանը ղեկավարում և հետևում է Տեխնիկական վարչության ընդհանուր գործունեությանը՝ ապահովելով տեխնիկական գործընթացների արդյունավետությունն ու ժամանակին իրականացումը: Նա պատասխանատու է ցանցի զարգացման, որակյալ ցանցի կառուցման համար՝ ապահովելով դրանց կայուն և անխափան աշխատանքը, ինչպես նաև Տեխնիկական վարչության համակարգերի, հիմնական բջջային կայանների արդյունավետ սպասարկումն ու շահագործումը:

Մարդկային ռեսուրսների վարչության պետ

ԼԱՐԱ ՉՈԼԱՔՅԱՆ

Պաշտոնավարում է 13 տարի
(2008 թվականի մայիսից)

Լարա Չոլաքյանը պատասխանատու է Ընկերության մարդկային ռեսուրսների ռազմավարական զարգացման, կազմակերպական զարգացման, աշխատուժի և կազմակերպական արդյունավետության, կազմակերպական մշակույթի, աշխատակիցների կորպորատիվ հարաբերությունների և իրավունքների պաշտպանության, մասնագիտական զարգացման և աճի, աշխատակիցների խրախուսումների, ներառյալ՝ կատարողականի հետ կապված պարգևավճարների, արտոնությունների, աշխատավարձի համակարգի և հատուցումների զարգացման, իրականացման և կառավարման համար:

Ֆինանսների և հաշվապահության վարչության պետի տեղակալ՝

ԱՆԵՏԱ ԵՓՐԻԿՅԱՆ

Պաշտոնավարում է 1 տարի
(2020 թվականի ապրիլից)

Անետա Եփրիկյանը պատասխանատու է ռազմավարական նախագծերի գնահատման, ռազմավարության համակարգման, բիզնես պլանավորման, բյուջետավորման և ներդրումային ծրագրերի, ինչպես նաև ֆինանսական գործընթացների ընդհանուր կառավարման և վերահսկման համար՝ երաշխավորելով համապատասխանությունը Ընկերության ռազմավարությանը:

Ներքին վերահսկողության և աուդիտի վարչության պետ, «ՄոբիԴրամ» ընկերության գլխավոր տնօրեն

ԿԻՄ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Պաշտոնավարում է 11 տարի
(2010 թվականի հունիսից)

Կիմ Ավանեսյանը պատասխանատու է որակի բարելավման ռազմավարության, որակի կառավարման համակարգերի, բիզնես գործընթացների բարելավման, ինչպես նաև Ընկերության բիզնեսի կառավարման ռազմավարական գործառույթների իրականացման համար: Նա նաև պատասխանատու է ներքին վերահսկողության միջոցների կառավարման, ռիսկերի և խարդախության գնահատումների, անվտանգության տեղեկատվական համակարգի գործընթացների իրականացման և Ընկերության որակի ռազմավարության համար:

Որպես «ՄոբիԴրամ» ընկերության գլխավոր տնօրեն՝ նա սահմանում և մշտադիտարկում է այդ ընկերության ռազմավարությունը և երկարաժամկետ զարգացման ծրագրերը, վերահսկում է ընկերության բիզնես գործառնությունների բոլոր ուղղությունները՝ առաջնորդելով «ՄոբիԴրամ» ընկերության զարգացումը և կազմակերպական աճի և սահմանված նպատակների իրագործումը:

Տեղեկատվական համակարգերի վարչության պետ

ԹՈՄԱՍ ՄԱԶԵՋՅԱՆ

Պաշտոնավարում է 11 տարի
(2010 թվականի օգոստոսից)

Թոմաս Մազեջյանը պատասխանատու է բիզնեսի և տեխնոլոգիաների կապի համար՝ S2 վարչության ռազմավարությունը համապատասխանեցնելով Ընկերության առաքելության, արժեքների և ռազմավարական նպատակների հետ: Նա ապահովում է բիլինգի և սակագնային համակարգերի աշխատանքի վերահսկումն ու աջակցումը, Ընկերության օգտատերերի պահանջներին համապատասխան պատշաճ աջակցության տրամադրումը: Նա նաև պատասխանատու է թվային տեխնոլոգիաների ոլորտում Վիվա-ՄՏՍ-ի դերի ձևավորման համար:

Մարքեթինգի և հաղորդակցման վարչության պետ

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Պաշտոնավարում է 4 տարի
(2017 թվականի օգոստոսից)

Դավիթ Գևորգյանը պատասխանատու է Ընկերության մարքեթինգային և հաղորդակցության ռազմավարության մշակման և իրականացման համար, ինչպես նաև վերահսկում է Մարքեթինգի և հաղորդակցման վարչության հիմնական գործառույթների (ապրանքատեսակների մշակում, բիզնես լուծումներ, PR, ԿՍՊ և այլն) կատարումը՝ Ընկերության առաքելությանը, արժեքներին, ռազմավարական նպատակներին և քաղաքականություններին համապատասխան:

Կորպորատիվ գործառույթների աուդիտի բաժնի պետ/Համապատասխանության գծով ղեկավար

ԻՆՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Պաշտոնավարում է 6 տարի
(2015 թվականի մայիսից)

Ինն Մնացականյանը պատասխանատու է կորպորատիվ գործառույթների աուդիտի, բիզնես գործընթացների կառավարման, ինչպես նաև Ընկերությունում համապատասխանության կառավարման համակարգի ներդրման և դրա վերահսկման համար: Նա նաև պատասխանատու է Ընկերության Որակի կառավարման համակարգի կատարելագործման, համապատասխան ISO ստանդարտների հավաստագրման, ինչպես նաև ընդունված ISO ստանդարտների առնչությամբ Ընկերության ներսում կատարվող աուդիտորական ստուգումների համար:

Կորպորատիվ կառավարման և իրավաբանական վարչության պետ՝

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Պաշտոնավարում է 5 տարի
(2016 թվականի օգոստոսից)

Արմինե Սարգսյանը պատասխանատու է Ընկերության բիզնեսի իրավական աջակցության և պաշտպանության, ռիսկերի կարգավորման և կորպորատիվ կառավարման խնդիրների լուծման, Ընկերության բիզնեսի զարգացումը վտանգող հնարավոր իրավական ռիսկերի կանխարգելման և վերացման, ինչպես նաև Ընկերության պայմանագրային գործընթացների պատշաճ կազմակերպման համար: Նրա պատասխանատվության շրջանակում է նաև Ընկերության ինչպես իրավական, այնպես էլ նյութական իրավունքների և շահերի պաշտպանությունը:

Անվտանգության բաժնի պետ՝

ԱՇՈՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պաշտոնավարում է 5 տարի
(2016 թվականի սեպտեմբերից)

Աշոտ Ավետիսյանը պատասխանատու է Ընկերության անվտանգության գործառույթների պլանավորման, համակարգման և վերահսկման, ինչպես նաև անվտանգության համապատասխան ընթացակարգերի առկայության և արդյունավետ իրագործման կազմակերպման և երաշխավորման համար: Նա պատասխանատու է ռիսկերի գնահատման համար և տրամադրում է առաջարկներ՝ հայտնաբերված ռիսկերը մեղմելու համար:

ՄԵՐ ԲԻԶՆԵՍՆ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱՑՔԻՑ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Բիզնեսի զարգացման ճիշտ ռազմավարության որոշումը նրա հաջողության հիմնական բաղադրիչներից է: Մենք կշարունակենք թափ հավաքել և պահպանել առաջատարի մեր դիրքը Հայաստանի հեռահաղորդակցության շուկայում, ինչպես նաև կշարունակենք աշխատել մեր՝ ժամանակակից ցանցային ենթակառուցվածքի և ծածկույթի վրա՝ մատուցելու բարձրորակ ծառայություն, որը վստահորեն հնարավորություն կտա անհատներին և ձեռնարկություններին կապ ունենալ ցանկացած վայրում և ցանկացած ժամանակ:

Մեր ռազմավարությունը կենտրոնացած է մեր առաջարկների պարզեցման և մեր թվային փոխակերպման արագացման վրա՝ հաճախորդային ավելի լավ փորձ ապահովելու համար: Որպես թվային լուծումների շուկայի առաջատար՝ Վիվա-ՄՏՍ-ը կներկայացնի նոր տեխնոլոգիաներ, որոնք թույլ կտան ապագայում թողարկել նորարարական ապրանքատեսակներ և ծառայություններ:

ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՐՔ
ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Եկամուտների շուկայական մասնաբաժինը՝ առանց մանրածախ բիզնեսի



2020 թվականը փորձության ենթարկեց արտաքին միջավայրին հարմարվելու և դրա փոփոխություններին արձագանքելու մեր կարողությունը: Փոփոխություններն աննախադեպ էին, և Վիվա-ՄՏՍ-ը վստահորեն դիմակայել է այդ մարտահրավերին: Մեզ հաջողվել է օգտվել զանգվածային հեռահաղորդակցության և թվային ծառայությունների աճող պահանջարկից, ինչը մեզ հնարավորություն է տվել բարձրացնել և հասնել շուկայի մասնաբաժնի թիրախային մակարդակներին՝ եկամուտների և բաժանորդների բազայի առումով: Վիվա-ՄՏՍ-ի եկամուտների շուկայի մասնաբաժինը՝ առանց մանրածախ բիզնեսի, 2019 թվականի համեմատ բարելավվել է 1,03 տոկոսային կետով, իսկ բաժանորդների մասնաբաժինը՝ 3,31-ով:.

Բաժանորդների շուկայի մասնաբաժինը



Շուկայի մասնաբաժինը՝ ակտիվացումների մասով



Առաջատարության մեկ այլ ցուցանիշ են ակտիվացումները, և Վիվա-ՄՏՍ-ը 2019 թվականի համեմատ ունեցել է 0,43 տոկոսային կետով բարելավված շուկայի ակտիվացումների մասնաբաժին: Covid-19 համավարակը ցույց տվեց, որ հեռահաղորդակցության ոլորտը ամբողջ աշխարհում և մասնավորապես Հայաստանում մեծ կարևորություն ունի առօրյա կենսակերպը պահպանելու համար: Հեռավար աշխատանքը, կրթությունը, բժշկությունը մեծապես կախված են հեռահաղորդակցության ոլորտից: Մեկուսացման շրջանում առօրյայի անբաժանելի մաս դարձած «Zoom», «Skype», «Telegram», «Viber», «WhatsApp», «Messenger», «Facebook» և «Instagram» հավելվածների միջոցով կրթության, առցանց հանդիպումների և առօրյա հաղորդակցության կազմակերպման նպատակով մեր բաժանորդներից շատերը գնում և օգտագործում էին մեր «X», «Y», «Z» սակագնային պլանների շարքը: Մեր «X» սակագնային պլանի օգտատերերն առցանց դիտում էին «YouTube» տեսանյութեր և «Netflix» ֆիլմեր:

*2019 թվականի համեմատ

3 ամսվա տվյալներ փոխանցման ծառայությունից օգտվող բաժանորդների շուկայի մասնաբաժինը



Տվյալների փոխանցումից եկամուտներ, 22 դրամ



Տվյալների փոխանցման ծառայությունից օգտվող բաժանորդների՝ 3 ամիսների 63.4% շուկայական մասնաբաժինը Վիվա-ՄՏՍ-ին դարձնում է բջջային տվյալների առաջատարը շուկայում: Ընկերությունը հանդիսանում է նորարարական V&D (ձայնային և տվյալների փոխանցման) սակագնային պլանների առաջին ներդրողը՝ ընձեռելով առավել գործածվող հավելվածների անսահմանափակ օգտագործման հնարավորություն: Վիվա-ՄՏՍ-ը կատարեց հաջորդ քայլը 2020 թվականին՝ հրաժարվելով տվյալների փոխանցման համար ըստ տրամադրվող մեգաբայթերի գանձումից, և հիմա V&D սակագնային պլանների բոլոր բաժանորդներն արդեն գիտեն, որ կարող են առանց անհանգստանալու օգտվել ինտերնետից:

Ընկերությունն արեց ավելին՝ ներկայացնելով «+» ծառայությունների նոր շարք և մատչելի գներով տրամադրելով +3ԳԲ կամ +10ԳԲ տվյալների փաթեթներ՝ ինտերնետի սպառումը մեր հաճախորդների համար է՛լ ավելի հարմարավետ դարձնելով: Համավարակային իրավիճակով և դրան հաջորդած սահմանափակումներով պայմանավորված՝ մենք նաև ականատես եղանք բովանդակության ծառայությունների օգտագործման, ինչպես նաև բջջային առցանց վճարումների աճող պահանջարկին:

Բովանդակության աճող պահանջարկը բավարարվել է տարբեր հավելվածներով, ինչպիսիք են՝ «Apps Club» և «Kids Club» (խաղեր և զվարճանքներ), «Fitness Club» (սպորտ), «#LikeU» (ժամադրություն), «IVI» (առցանց կինոթատրոն), «Fantasy League» (ֆուտբոլային խաղեր), «E-Teacher» (անգլերենի դասընթաց) և այլն: «ՄոբիԴրամ» վճարային հավելվածի միջոցով բաժանորդներին հնարավորություն է տրվել կատարել տարբեր առցանց վճարումներ:

Չնայած ինտերնետի վրա հիմնված մեսինջերները Հայաստանում շատ բարձր թափանցելիություն ունեն, ավանդական SMS հաղորդագրությունները կարծես թե ավելի հուսալի են հայկական բիզնեսի համար: Բիզնես սեգմենտին տրամադրվող զանգվածային SMS ծառայությունները շատ տարածված են, և մենք ներկայումս աշխատում ենք նոր ինտերֆեյսի վրա՝ ծառայությունների մատուցումն ավելի արդյունավետ և հաճախորդների օգտագործման հարմար հարմարավետ դարձնելու համար:

ՄԵԾ ՏՎՅԱԼՆԵՐ (BIG DATA)

Մեծ տվյալները Վիվա-ՄՏՍ-ի արտադրանքի, լուծումների և ծառայությունների մեծ մասի տեխնոլոգիական հիմքերից են: Այս ոլորտի հիմնական նպատակն է ապահովել հիմնական ապրանքատեսակների ուղղահայացների առավել արդյունավետ զարգացումը:

Մեծ տվյալների վերլուծության միջոցով Վիվա-ՄՏՍ-ն իր հաճախորդների համար ներկայացնում է առավել արդյունավետ առաջարկներ, ինչն Ընկերության կողմից ծառայություններ զարգացնելիս և մշակելիս բարձրացնում է ապրանքատեսակների մրցունակությունը:
Վիվա-ՄՏՍ-ն օգտագործում է Մեծ տվյալների վերլուծությունը հեռահաղորդակցության ենթակառուցվածքի զարգացումն արդյունավետ պլանավորելու համար: Բաժանորդների տեղաշարժի դինամիկայի վերլուծությունը և զանգվածային ծանրաբեռնվածության կետերի հայտնաբերումը թույլ են տալիս կանխել ծանրաբեռնվածությունը և գնահատել լրացուցիչ սարքավորումների տեղադրման անհրաժեշտությունը: Մեծ տվյալների օգնությամբ Վիվա-ՄՏՍ-ը նաև վերլուծում է հետիոտների շարժը մանրածախ խանութներում և ձևավորում մանրածախ ցանցի զարգացման ռազմավարություն:

Վիվա-ՄՏՍ-ի տվյալների վերլուծությունը հստակ հավակնություն ունի ամրապնդելու մեր տարբերակումը այլ ընկերություններից և ոլորտում առաջատար հանդիսանալու՝ թվային տեխնոլոգիաների առավելությունները կիրառելու առումով: Արդյունքում, մենք համակարգված կերպով թվայնացնում ենք մեր աշխատանքային մոդելը և բարելավում ենք հաճախորդների սպասարկման փորձը՝ հիմնվելով տվյալների վերլուծության վրա:
2020 թվականին մենք շարունակեցինք ամրապնդել մեր բիզնեսի հորիզոնական գծերը, որոնք պատասխանատու են մեծ տվյալների վերլուծության զարգացման համար՝ որպես խորապես անհատականացված մոտեցման հիմք:
Մեծ տվյալների կիրառման ակնառու օրինակ է «Լիցք+» ծառայությունը, որն Ընկերությունը ներկայացրեց 2020 թվականին՝ COVID-19 համավարակի ժամանակ՝ բաժանորդներին հնարավորություն տալով օգտվել հեռահաղորդակցության ծառայություններից տվյալ պահին, իսկ վճարումը կատարել ավելի ուշ:

ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՃԱՌՔԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ

73 սեփական սպասարկման սրահներ **+ գործընկերների վաճառակետերի ցանց**

Սեփական սպասարկման սրահների ցանցը Վիվա-ՄՏՍ-ի հաճախորդների սպասարկման հիմնական միջոցն է: 2020 թվականին դրանց քանակը կազմել է 73:

COVID-19 համավարակով պայմանավորված՝ մեկուսացման սահմանափակումների ընթացքում Վիվա-ՄՏՍ-ը մեծացրել է հատուկ SIM-քարտերի վաճառքի տեղաբաշխումը գործընկերների ցանցերի միջոցով.
«Ալֆա Ֆարմ» ընկերություն՝ 42 վաճառակետ
«Պրես Ստենդ» ընկերություն՝ 330 վաճառակետ

Դա մեզ թույլ տվեց ավելացնել հասանելիությունը և նոր բաժանորդներին հնարավորություն տալ ավելի հեշտ մուտք գործել մեր ցանց: Միևնույն ժամանակ, գործընկերների ցանցերի միջոցով կատարված վաճառքի մասնաբաժինը շատ փոքր է և կիրառելի է միայն որոշ հրատապ իրավիճակների համար (ընդհանուր ծավալի 2%-ից պակաս):
2020 թվականին մենք փակել ենք 3 ոչ արդյունավետ գործող սպասարկման կենտրոն՝ հիմնվելով հաճախորդների հոսքի վերլուծական տվյալների և հարակից այլ տվյալների վրա, և բացել 1 նոր կենտրոն Երևանում (Սեբաստիա թաղամասում), իսկ Նոյեմբերյանի մեր հին կրպակից տեղափոխվել ենք նոր ժամանակակից տարածք:

Հատուկ SIM-քարտերի վաճառքի տեղաբաշխում գործընկերների ցանցերի միջոցով.

«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
42 ՎԱՃԱՌԱԿԵՏ

«ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
330 ՎԱՃԱՌԱԿԵՏ

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ՝ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՄԱՆՐԱԾԱԽ ՑԱՆՑ

Սպասարկման կենտրոնները Վիվա-ՄՏՍ-ի հաճախորդների անմիջական սպասարկման և հաճախորդների պահպանման հիմնական միջոցն են: Մենք մատուցում ենք հաճախորդների բարձրակարգ սպասարկում Հայաստանի Հանրապետության տարածքում, իրականացնում ենք կապի տեխնոլոգիաների և բջջային սարքերի վաճառք՝ հաճախորդներին առաջարկելով առավել արդիական ապրանքատեսակներ և ծառայություններ:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետությունում գործում են թվային գործիքներով լիովին հագեցած 73 սպասարկման կենտրոններ, որոնք աշխարհագրորեն ընդգրկում են պետության ողջ տարածքը: Հայաստանի Հանրապետության 10 մարզերում գործում է 52 սպասարկման կենտրոն, իսկ Երևանում՝ 21 սպասարկման կենտրոն:

2020 թվականին գրանցվել է ավելի քան 4,2 մլն. հաճախորդների մուտք մեր սպասարկման կենտրոններ:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒՄ

Վիվա-ՄՏՍ-ում հաճախորդների աջակցման ամենադասական միջոցը Զանգերի կենտրոնն է (Հիմնական աջակցում և Կոմերցիոն աջակցում): Այն գործում է 24/7/365 ռեժիմով՝ ապահովելով հաճախորդների բարձրակարգ սպասարկում՝ Զանգերի կենտրոնի թեժ գծի միջոցով, և սպասարկելով բիզնես և այլ հաճախորդների՝ տրամադրելով ինչպես ընդհանուր հիմնական աջակցում, այնպես էլ՝ տարբեր տեսակի կոմերցիոն աջակցության ծառայություններ: Վիվա-ՄՏՍ-ի բաժանորդները կարող են կապ հաստատել մեր Զանգերի կենտրոնի հետ՝ Վիվա-ՄՏՍ-ի հեռախոսահամարներից զանգահարելով 111 (անվճար) կամ Հայաստանի այլ ցանցերից զանգահարելով +37493297111 հեռախոսահամարին (վճարները գանձվում են ըստ համապատասխան օպերատորի սահմանած սակագների): Ռոումինգում գտնվող Վիվա-ՄՏՍ-ի բաժանորդները կարող են կապ հաստատել թեժ գծի հետ՝ զանգահարելով 111 կարճ համարին (անվճար)՝ ՄՏՍ Ռուսաստանի ցանցից, և +37493297111 հեռախոսահամարին (անվճար)՝ այլ ցանցերից: Զանգահարելով Զանգերի կենտրոն՝ հաճախորդները կարող են սպասարկվել ինչպես IVR (Interactive Voice Response) համակարգի միջոցով, որը հաճախորդների ինքնասպասարկման ավտոմատացված ձայնային համակարգ է, այնպես էլ՝ կապ հաստատելով սպասարկող մասնագետների հետ: 2020 թվականին Զանգերի կենտրոնին առնչվող ընդհանուր վիճակագրությունը հետևյալն է.

- ավելի քան 5,000,000 հաճախորդների զանգեր սպասարկվել են միայն IVR համակարգում՝ ավտոմատացված ինքնասպասարկման միջոցով,
- ավելի քան 2,200,000 հաճախորդների զանգեր սպասարկվել են Զանգերի կենտրոնի գործակալների և մասնագետների կողմից:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ (ԹՎԱՅԻՆ) ԱՋԱԿՑՈՒՄ

Էլեկտրոնային աջակցումը Վիվա-ՄՏՍ-ի հաճախորդների ամբողջական սպասարկման կարևոր և արագ զարգացող միջոց է, որն ապահովում է հաճախորդների սպասարկման բարձր որակ հաճախորդների էլեկտրոնային հարցումների դեպքում, որոնք ստացվում են տարբեր էլեկտրոնային կապուղիներով և համապատասխանաբար սպասարկվում են այդ կապուղիներով՝

- 111@mts.am էլեկտրոնային հասցեին ստացված հաճախորդների էլեկտրոնային նամակներ,
- առցանց չաթ «111 օնլայն» էջի և «Ինտերնետ օգնական» ինքնասպասարկման պորտալի միջոցով,
- սոցիալական ցանցերում և դրանց մեսինջերներում Վիվա-ՄՏՍ-ի օգտահաշիվների միջոցով:

2020 թվականին էլեկտրոնային աջակցման թիմը սպասարկել է ավելի քան 100,000 հաճախորդի էլեկտրոնային հարցումներ:

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ և ՀԱՏՈՒԿ ԱՋԱԿՑՈՒՄ

Վիվա-ՄՏՍ-ի հաճախորդների ամբողջական աջակցության մեկ այլ կարևոր միջոց է հաճախորդների հետ փոխհարաբերությունները և հաճախորդների պահպանման և Հատուկ աջակցման գործառույթները:

Հաճախորդների հետ հետադարձ կապի պահպանումը նպաստում է հաճախորդների աջակցման մակարդակի և արդյունավետության բարձրացմանը՝ ձեռք բերված փորձի, վերլուծության, միջֆունկցիոնալ համագործակցության միջոցով՝ մշտապես ընդլայնելով Հաճախորդների աջակցման սպասարկող անձնակազմի գիտելիքները՝ հաճախորդների սպասարկման որակի բարելավման և նրանց գոհունակության ավելի բարձր մակարդակ ապահովելու, ինչպես նաև ծառայությունների/ ապրանքատեսակների աջակցման նպատակով:

Հատուկ աջակցումն իրականացնում է հաճախորդների ավելի բարդ հարցումների և գրավոր ներկայացված բողոքների սպասարկում:

2020 թվականին Հատուկ աջակցման թիմը ավելի քան 1,300 նման գրավոր հարցում է սպասարկել:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԴԵՊԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԲԱԶՄԱԿԻ ԿԱՊՈՒՂԻՆԵՐ)

Նախագծեր և նախաձեռնություններ

- Կարճ և միջին ժամկետներում հաճախորդների սպասարկման համակարգերի ու գործընթացների (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին) թվայնացում՝ անցում կատարելով Հաճախորդների սպասարկման «Մեկից ավելի» կապուղիների (Multi-Channel) և գործարկելով դրանք:

- Միջին ժամկետներում և երկարաժամկետ հեռանկարում հաջորդական անցում «Multi-Channel»-ից դեպի «Բազմակի» կապուղիներով (Omni-Channel) հաճախորդների աջակցման՝ հաճախորդների միասնական փորձը շատ ավելի բարձր մակարդակի հասցնելու համար՝ բոլոր ոչ առցանց և թվային կապուղիների ինտեգրման միջոցով:

- Հաճախորդների աջակցման և վերջինիս փորձի մակարդակի ու որակի մշտական բարձրացում բոլոր եղանակներով (կարճաժամկետից մինչև երկարաժամկետ)՝ արդյունավետ օգտագործելով և համապատասխանեցնելով բոլոր հնարավորությունները:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հաճախորդների աջակցման համար 2020 թվականի հիմնական մարտահրավերները հետևյալն էին.

- Ամբողջապես գրասենյակային աշխատանքից հրատապ անցում դեպի ամբողջապես հեռավար ռեժիմի՝ COVID-19 համավարակով պայմանավորված մեկուսացման սահմանափակումներից ելնելով՝ տեխնիկապես բարդ համակարգերի և՛ պլանավորման և՛ իրականացման համար ժամանակի սղության պայմաններում:
- COVID-19 համավարակով պայմանավորված՝ խիստ մեկուսացման ընթացքում նախքան սպասարկման կենտրոնների վերաբացումը հաճախորդների հետ փոխգործակցությունն իրականացնում էր միայն Բաժանորդների աջակցման և էլեկտրոնային կոմերցիայի թիմը:
- Տեխնիկապես բարդ և սովորականից տարբերվող միջոցներով աշխատելու փորձի ձեռքբերում ինչպես հրատապ հեռավար ռեժիմին անցնելու համար (իրականացումը 1 ամսվա ընթացքում), այնպես էլ ստանդարտ աշխատանքային գործընթացներում:
- Ոչ ստանդարտ ծանրաբեռնվածությունը կարգավորելու աշխատանքային փորձի ձեռքբերում:
- Հաճախորդների կողմից թվային և ինքնասպասարկման լուծումների և էլեկտրոնային աջակցման կապուղիների ավելի տարածված կիրառում և պահանջարկ:
- Տեխնիկապես բարդ նախագծերի և նախաձեռնությունների իրականացում աշխարհի և մեր պետության մակարդակով կատարվող փոփոխությունների պայմաններում:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՈՄԵՐՑԻԱ

Էլեկտրոնային կոմերցիան համեմատաբար երիտասարդ և արագ զարգացող ուղղություն է Վիվա-ՄՏՍ-ում: Օնլայն խանութը (https://shop.mts.am) առցանց մանրածախ վաճառքի և հաճախորդների աջակցման/սպասարկման հիբրիդ է (+37493298700 հատուկ թեժ գծի հեռախոսահամարով 24/7/365 աջակցման միջոցով), որը փորձում է ապահովել հաճախորդների գոհունակության ավելի բարձր մակարդակ, ավելի լավ հաճախորդային փորձ և, նաև, բավարարել հաճախորդների առցանց մանրածախ գնումներ կատարելու կարիքները:
Ելնելով COVID-19 համավարակի պայմաններից՝ Օնլայն խանութի առկա դասական առցանց մանրածախ վաճառքի բաժինների կողքին (բջջային հեռախոսներ, աքսեսուարներ և այլն գնելու համար) ավելացվել է Հեռահաղորդակցության բաժին, որը հաճախորդներին հնարավորություն է տալիս առցանց պատվիրել հեռախոսահամարի տեղափոխության ծառայություն (MNP):
Ներկայումս գնումների համար հաճախորդները կարող են օգտվել առցանց վճարումների մի շարք տարբերակներից՝ տեղական և միջազգային բանկային քարտեր, ինչպես նաև Վիվա-ՄՏՍ-ի՝ «ՄոբիԴրամ» վճարային համակարգը, ներառյալ՝ էլեկտրոնային դրամապանակը:
Էլեկտրոնային կոմերցիայի մասնաբաժինը Վիվա-ՄՏՍ-ի մանրածախ ընդհանուր հասույթում 2020 թվականին 2019 թվականի համեմատ զգալիորեն աճել է՝ հասնելով 6 տոկոսի:
Էլեկտրոնային կոմերցիան Վիվա-ՄՏՍ-ում դինամիկ և բազմաչափ է զարգանում:

այցելել e-shop

ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԻՄ ՎԻՎԱ-ՄՏՍ

«Իմ Վիվա-ՄՏՍ» բջջային հավելվածը բաժանորդներին առաջարկում է հարմարավետ ինքնասպասարկման լուծումներ՝ թույլ տալով.

- վերահսկել հաշվեկշիռը
- ընտրել հաղորդակցության անհատական կարիքներին առավել համապատասխան սակագնային պլաններ և ծառայություններ,
- ակտիվացնել/ապաակտիվացնել ծառայությունները,
- վերահսկել ինտերնետի, խոսելաժամանակի և SMS փաթեթները,
- վճարել ծառայությունների համար բանկային քարտով կամ այլ միջոցներով,
- գտնել մոտակա սպասարկման կենտրոնները,
- զանգահարել թեժ գիծ,
- փոխանակել բոնուսային միավորները նվերների հետ և այլն:

ՄՈԲԻԴՐԱՄ

«ՄՈԲԻԴՐԱՄ» վճարային համակարգը բջջային և առցանց ֆինանսական լուծում է հայկական շուկայում, որը հնարավորություն է տալիս.

- կատարել հեշտ և արագ դրամական փոխանցումներ ցանկացած վայրում, ցանկացած պահի,
- կատարել մի շարք ակնթարթային առցանց վճարումներ: «ՄՈԲԻԴՐԱՄ» ընկերությունը նաև առաջարկում է վճարումներ կատարել իր մասնաճյուղերում և իր տերմինալների միջոցով:

IVI

«Ivi» առցանց կինոթատրոնն առաջարկում է բացառիկ նորույթներ, «Disney», «Marvel», «Warner», «Paramount» և այլ արտադրողների կատալոգներ: Վիվա-ՄՏՍ-ի բաժանորդները կարող են ծառայությանը բաժանորդագրվել 1 օր կամ 1 ամիս ժամկետով:

FITNESS CLUB

«Fitness Club» ծառայությունը ֆիթնեսի և առողջ ապրելակերպի հավելվածների լավագույն հավաքածուն է և առաջարկում է.

- սպորտ և ֆիզիկական առողջության զարգացում,
- առողջ սնունդ,
- էմոցիոնալ և մտավոր առողջություն,
- մտքի մարզում և զարգացում,

Վիվա-ՄՏՍ-ի բաժանորդները կարող են ծառայությանը բաժանորդագրվել 1 օր, 1 շաբաթ կամ 1 ամիս ժամկետով:

APPS CLUB

«Apps Club» ծառայություն. 700-ից ավելի պրեմիում հավելված և խաղ՝ մեծահասակների ու երեխաների համար:

Վիվա-ՄՏՍ-ի բաժանորդները կարող են ծառայությանը բաժանորդագրվել 1 օր, 1 շաբաթ կամ 1 ամիս ժամկետով:

KIDS CLUB

«Kids Club» ծառայություն. հարյուրավոր պրեմիում խաղեր՝ նախատեսված հատուկ երեխաների համար:

Վիվա-ՄՏՍ-ի բաժանորդները կարող են ծառայությանը բաժանորդագրվել 1 օր, 1 շաբաթ կամ 1 ամիս ժամկետով:

ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

FANTASY LEAGUE

«Fantasy League» հավելվածը առցանց ֆուտբոլային լիգա է: Այն հնարավորություն է տալիս կազմել Ձեր սիրելի խաղացողներից բաղկացած թիմ, մրցել անցյալում տեղի ունեցած իրական հանդիպումներում և ստանալ հնարավորություն՝ շահելու 5-ից մինչև 25 ԳԲ ինտերնետ փաթեթներ: Վիվա-ՄՏՍ-ի բաժանորդները կարող են դիմել օրական բաժանորդագրության համար:

«E-TEACHER» ՀԱՎԵԼՎԱԾ

«E-Teacher»-ը հայերեն և ռուսերեն լեզուներով հասանելի՝ օտար լեզուների ուսուցման պարզ հավելված է: Ներկայում հավելվածով կարելի է սովորել անգլերեն:
Վիվա-ՄՏՍ-ի բաժանորդները կարող են դիմել օրական բաժանորդագրության համար:

LIKE U

«#LikeU» հավելվածը բոլոր նրանց համար է, ովքեր սիրում են շփվել, ձեռք բերել նոր ծանոթություններ և ընկերներ:
Վիվա-ՄՏՍ-ի բաժանորդները կարող են դիմել օրական բաժանորդագրության համար:



Ներբեռնել
App Store-ից

Ներբեռնել
Google Play-ից

2020Թ. ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

COVID-19 ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎՐԱ

Հեռահաղորդակցության, ինչպես նաև թվային ծառայությունների ոլորտները ենթարկվում են տեխնոլոգիական արագ և զգալի փոփոխությունների և բնութագրվում են նոր ապրանքատեսակների և ծառայությունների շարունակական ներդրմամբ: Բջջային հեռահաղորդակցության և թվային ծառայությունների ոլորտները Հայաստանում նույնպես զգալի տեխնոլոգիական փոփոխություններ են գրանցում, ինչի վկայությունն է ռադիոհեռահաղորդակցության ստանդարտների մշտական տեխնոլոգիական զարգացումը: Ապրանքատեսակների և ծառայությունների հին մոտեցումներն այլևս կոմերցիոն առումով արդյունավետ չեն, և մենք շարունակաբար փոփոխում ենք մեր ապրանքատեսակները կամ ծառայությունները՝ ի պատասխան շուկայի պահանջարկի, ինչը ենթադրում է նոր տեխնոլոգիաների և զարգացող արդյունաբերության ստանդարտների ընդունում՝ մեր՝ արդեն իսկ առկա տեխնոլոգիաներով:

2020 թվականին Վիվա-ՄՏՍ-ը բախվեց շուկայում աճող մրցակցությանը. մրցակցության թեժացմանը, ի թիվս այլ հանգամանքների, նպաստեց պոտենցիալ մրցակիցների միաձուլումն ու համախմբումը, ինչպես նաև COVID-19 համավարակը, որն ի ազդեցությունն ունեցավ ողջ հասարակության վրա:

Մենք շուկայում առաջինն ենք, որ հանդես ենք եկել առցանց կրթությունն աջակցելուն ուղղված առաջարկներով և օգնել ենք Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանին 2020 թվականի մարտի 23-ին գործարկել առաջին հայկական առցանց համալսարանական կրթական հարթակը՝ «iUniversity»-ն:

Երբ ամբողջ կրթական համակարգը հայտարարեց առցանց աշխատելու մասին, և մեծ ընկերությունները սկսեցին հեռավար աշխատել, Վիվա-ՄՏՍ-ը ներկայացրեց «+Meeting» ծառայությունը՝ «X», «Y» և «Z» սակագնային պլանների բաժանորդների համար՝ նախատեսված «Zoom» և «Skype» հավելվածներով առցանց անցկացվող աշխատանքային հանդիպումների և այլ վիրտուալ շփումների համար՝ առանց փաթեթների շրջանակում տրամադրվող ինտերնետի մեգաբայթների սպառման:



2020 թվականի սեպտեմբերին Հայաստանում ռազմական դրություն էր հայտարարվել՝ կապված Լեռնային Ղարաբաղում հակամարտության սրման հետ: Շարունակվող լարվածությունը և հակամարտության հետագա սրումը բացասաբար ազդեցին Հայաստանի տնտեսության, ինչպես նաև բիզնեսի, ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա:

Վիվա-ՄՏՍ-ն առաջինն էր, որ 2020 թվականի հոկտեմբերից Արցախում իր բաժանորդների համար ներկայացրեց 0 դրամ/րոպե սակագին դեպի Վիվա-ՄՏՍ, ինչպես նաև Արցախի բջջային և ֆիքսված ցանցեր զանգերի և բոլոր ռոումինգ ծառայությունների համար:
2020 թվականին, տվյալների նկատմամբ աճող պահանջարկը հաշվի առնելով՝ Վիվա-ՄՏՍ-ը Հայաստանում մեկնարկեց ցանցի արդիականացման խոշոր նախագիծ, որի արդյունքում զգալիորեն ավելացավ 4G ծառայությունների ծածկույթը, ինչպես նաև ցանցի թողունակությունը: Արդիականացման շրջանակում վերակառուցվեց 900 ՄՀց հաճախականության տիրույթը՝ UMTS-ի և 1800 ՄՀց հաճախականության տիրույթը LTE ցանցի՝ «Carrier Aggregation» տեխնոլոգիաների ներդրմամբ: Հիմնական ցանցի նոր հանգույցները շահագործման են հանձնվել 2020 թվականին՝ նշանավորելով ավելի մեծ CS և PS Core արդիականացման նախագծի ավարտը: 2020 թվականի վերջի դրությամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի ցանցն ունի ընդհանուր առմամբ 1700 2G բազային փոխանցող կայան, 2517 3G բազային կայան և 1805 4G տեղանք:

2020 թվականի վերջին «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի ցանցն ունի ընդհանուր 1700 2G բազային փոխանցող կայան, 2517 3G բազային կայան և 1805 4G տեղանք:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

Հասույթ	48,524,199,150
Շարժական բջջային կապի բիզնեսից ստացված հասույթներ	44,691,151,682
V&D (ձայնային, տվյալների փոխանցման, SMS հաղորդագրությունների ծառայություններ),	35,609,854,925
Ռոումինգ ծառայության փոխկապակցում	6,014,472,987
Ռոումինգ, ներառյալ՝ ավելացված արժեքի ծառայությունները	1,086,041,677
Հասույթներ՝ ավելացված արժեքի ծառայություններից և բովանդակությունից	453,283,910
Այլ բջջային ծառայություններ	1,527,498,183
Ֆիքսված ծառայություններից ստացված հասույթ	1,178,202,188
Մանրածախ վաճառք	2,507,422,595
Այլ հասույթներ	147,422,685
Ինքնարժեք	(14,576,573,158)
Համախառն մարժա	33,947,625,992
Համախառն մարժա	70%
Առևտրային ծախսեր	(5,108,635,351)
Վերադիր ծախսեր	(6,261,547,885)
Գործառնական շահույթը՝ մինչև կապիտալացումը	22,577,442,755
Գործառնական շահույթը՝ մինչև կապիտալացումը, %	47%
Կապիտալացում	2,400,017,422
Գործառնական շահույթ (OIBDA)	24,977,460,177
Գործառնական շահույթի (OIBDA) %	51%
Ամորտիզացիա	(13,599,084,805)
Հասույթ/ ծախսեր ֆինանսավորումից	1,334,303,303
Արտարժույթի փոխարժեքի ազդեցություն	1,953,069,859
Այլ հասույթներ և ծախսեր	(1,673,294,800)
Շահույթ մինչև հարկումը	12,992,453,734
Հարկ	(500,267,482)
Զուտ շահույթ	12,492,186,252
Զուտ շահույթ, %	26%
Կապիտալ ծախսերի դրամական միջոցներ	12,991,886,590
Կապիտալ ծախսերի օգտագործում	12,992,503,336

Ծանոթագրություն. Կապիտալացում ըստ IFRS15

2020 թվականին Վիվա-ՄՏՍ-ի եկամուտները կազմել են 48,5 մլրդ դրամ: Պահպանվել է համախառն մարժայի 70%-ը, իսկ գործառնական շահույթի մարժայի՝ 47%-ը (մինչ կապիտալացումը)՝ չնայած բիզնեսի վրա COVID-19-ի զգալի բացասական ազդեցությանը:

COVID-19-ի տարածումը 2020 թվականին և դրան հաջորդող սահմանափակումները և մեկուսացումը, հանգեցրին մարդկանց շարժունակության և եկամտի մակարդակի նվազմանը և զբոսաշրջային հոսքերի բացակայությանը: Բացի այդ, սպասարկման կենտրոնները գործում էին պետության կողմից սահմանված սահմանափակումներով: Այս գործոնները Հայաստանում հեռահաղորդակցության բիզնեսի եկամուտների նվազման պատճառ դարձան: Վիվա-ՄՏՍ-ը, լինելով Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտի առաջատարը, այնուամենայնիվ, կարողացել է պահել և նույնիսկ ավելացնել շուկայի իր մասնաբաժինը եկամուտների մասով (առանց փոխկապակցման և մանրածախ առևտրի):

Եկամուտների նվազման դեպքում Վիվա-ՄՏՍ-ը կարողացել է արդյունավետ կառավարել ծախսերը և կատարել անվտանգ օպտիմալացումներ՝ բարձր շահութաբերությունը պահպանելու համար:

ՀՀ դրամով	2020 Ընդհանուր	2019 Ընդհանուր	2020-2019
Ձայնային ծառայություններից ստացված հասույթներ	11,674,202,327	12,717,807,462	-1,043,605,135
Ռոումինգ ծառայություններից ստացված հասույթներ	1,086,041,677	2,067,074,690	-981,033,013
Բաժանորդային հասույթներ	1,594,096,108	1,768,541,415	-174,445,307
Ակտիվացում	42,333,580	55,257,300	-12,923,720
Ավելացված արժեքի ծառայություններ, ներառյալ՝ Ավելացված արժեքի ծառայություններ ռոումինգում)	22,897,157,557	22,236,707,157	660,450,400
Այլ հասույթներ՝ բիզնես սեգմենտ	1,317,705,316	969,106,954	348,598,362
Փոխկապակցումից հասույթներ	6,014,472,987	9,624,959,086	-3,610,486,099
Շարժական կոմերցիա	167,459,288	193,153,394	-25,694,106
Բջջային կապից ընդհանուր հասույթներ	44,691,151,682	49,363,568,296	-4,672,416,614
Ճանգվածային սեգմենտ	34,687,637,037	35,476,696,343	-789,059,306
Բիզնես սեգմենտ	3,526,805,611	3,496,177,938	30,627,673
Ընդհանուր այլ հասույթներ	147,422,685	143,732,261	3,690,424
Մանրածախ վաճառքից հասույթներ			
Ապրանքների վաճառքից ստացված հասույթներ՝ ընդհանուր	2,459,129,440	5,672,658,555	-3,213,529,115
Մեծածախ վաճառքից և ֆրանչայզինգից հասույթներ՝ ընդհանուր	48,293,155	76,306,245	-28,013,090
Մանրածախ վաճառքից ընդհանուր հասույթներ	2,507,422,595	5,748,964,800	-3,241,542,205
ՖԲ հասույթներ			
ՖԲ հասույթներ՝ ֆիզիկական անձանց սեգմենտ	55,509,985	53,555,033	1,954,952
ՖԲ հասույթներ՝ բիզնես սեգմենտ	818,415,535	928,323,302	-109,907,767
ՖԲ հասույթներ՝ այլ օպերատորներ	304,276,668	375,554,673	-71,278,005
ֆիքսված բիզնեսից ընդհանուր հասույթներ	1,178,202,188	1,357,433,008	-179,230,820
Բիզնեսից հասույթներ			
Ընդհանուր հասույթներ	48,524,199,150	56,613,698,366	-8,089,499,216

Ծանոթագրություն. Կապիտալացում ըստ IFRS15

2020 թվականին Վիվա-ՄՏՍ-ի ընդհանուր հասույթները 2019 թվականի համեմատ նվազել են 8 մլրդ դրամով:

Այս նվազման հիմնական պատճառը երկրում COVID-19-ով պայմանավորված ընդհանուր ճգնաժամն էր:

Անմիջական բացասական ազդեցությունը եղել է ձայնային և ռոումինգ ծառայությունների վրա, իսկ տվյալների փոխանցման ծառայություններից ստացված հասույթները հանդիսացել են բջջային կապի հասույթների աճի պայմանը: ՄՏՍ Հայաստանը հետևում է տվյալների ծառայությունների ընդլայնման համաշխարհային միտումին՝ այդպիսով շարունակաբար բարելավելով ցանցը և շուկա ներմուծելով մրցունակ գնային պլաններ: Տարածքների ներսում կապի ուժեղացումը 2020 թվականի գլխավոր նպատակներից մեկն էր:

Այլ ավելացված արժեքի ծառայություններից հասույթները նույնպես նպաստել են հասույթների ավելացմանը՝ պայմանավորված բջջային հավելվածների օգտագործման մեծացմամբ և զանգվածային SMS-ից ստացվող հասույթների աճով:

Փոխկապակցման հասույթների նվազումը հիմնականում պայմանավորված է ՄՏՍ-Ռուսաստան-ի հետ Ստանդարտ գործառնական ընթացակարգերի (SOP) պայմանագրի պայմանների փոփոխությամբ (-2,5 մլրդ դրամ):

Մանրածախ վաճառքի հասույթների վրա մեծ ազդեցություն են ունեցել COVID-19-ով պայմանավորված մեկուսացումը և սպասարկման կենտրոնների աշխատանքի սահմանափակումները (սոցիալական հեռավորության պահպանում և միաժամանակ սահմանափակ թվով բաժանորդների սպասարկում): Նշված սահմանափակումների ընթացքում որոշում է կայացվել նախապատվություն տալ հիմնական բիզնես վաճառքներին, այլ ոչ՝ մանրածախին: 2020թ.-ի վերջին Վիվա-ՄՏՍ-ը բաժնետոմսերը վաճառել է հատուկ գներով՝ 2021 թվական մուտք գործելով առողջ բաժնային կապիտալով:

Ֆիքսված բիզնես կապի ոլորտում Վիվա-ՄՏՍ-ը հիմնականում ներկայացված է B2B բաժանորդների համար նախատեսված ծառայություններով: B2C բաժանորդների համար ծառայությունները հասանելի են 3 շրջաններում: 22 մարզերում ընդլայնվում է B2B ցանցի աշխարհագրությունը:

2019 թվականի կեսերին եկամուտների զգալի նվազումից հետո, 2020 թվականին, մի քանի խոշոր պայմանագրերի կնքման արդյունքում գրանցվել է հասույթների կայուն աճ: 2020 թվականի չորրորդ եռամսյակում օպերատորների եկամուտների նվազեցումը պայմանավորված է եղել հոկտեմբերի 20-ից «Ղարաբաղ-Տելեկոմ» ընկերության հետ IP-ի համար պայմանագրի գնի զրոյացմամբ:

22 դրամով

	2020 - Ընդհանուր
Ներդրումային եկամուտ և ֆինանսավորման ծախսեր	11,378,375,372
Տոկոսային եկամուտ	1,334,303,303
Տոկոսի վճարման ծախսեր	0
Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն	1,953,069,859
Արժեզրկման կորուստ	-68,781,600
Ազատ միջոցների արժեզրկում	-68,781,600
Ակտիվների արժեզրկում	0

22 դրամով

Եկամուտ (վնաս)՝ մինչև հարկումը	12,992,453,734
Եկամտահարկ	3,449,092,268
Հետաձգված եկամտահարկ	-2,948,824,786
Շահույթ (վնաս)՝ հարկումից հետո	12,492,186,252
Մինորիտար բաժնային փաթեթներ	0
Բաժնետերերին հասանելի զուտ շահույթ (վնաս)	12,492,186,252
Ճշգրտումներ/ուղղումներ	0
Զուտ շահույթ (վնաս)՝ հասանելի բաժնետերերին՝ մինչև սահմանաչափը	12,678,647,298

Վիվա-ՄՏՍ-ի բաժնետերերին հասանելի զուտ շահույթը 2020 թվականին կազմել է **12.7 մլրդ ՀՀԴ**՝ մինչև ըստ ՖՀՄՍ 15-ի և ՖՀՄՍ16-ի կապիտալացումը:

Վիվա-ՄՏՍ-ը շարունակում է աշխատել առանց պարտքերի՝ բավարար եկամտային հոսքերի շնորհիվ, ուստի տոկոսային ծախսեր չեն գրանցվել:

2020 թվականին փոխարժեքի զգալի աճի պատճառով Վիվա-ՄՏՍ-ը հայտնել է արտարժույթի շուկայում **2 մլրդ ՀՀԴ** ձեռք բերելու մասին:

Շահութահարկը հաշվարկվում է **18% դրույքաչափով:** Արդյունավետ դրույքաչափը տարբերվում է հարկումից ազատված եկամուտներից և ծախսերից:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

	2020 դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ	
Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հիմնական միջոցներ	30,860,298
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5,514,241
Ոչ նյութական ակտիվներ	11,687,558
Տրամադրված փոխառություններ	–
Հետաձգված եկամուտի հարկային ակտիվներ	3,435,691
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	452,280
Բանկային ավանդներ	–
	51,950,068
Ընթացիկ ակտիվներ	
Պաշարներ	1,368,169
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,362,207
Տրամադրված փոխառություններ	19,685,707
Կարճաժամկետ փոխառություններ աշխատակիցներին	252,649
Բանկային ավանդներ	9,968,137
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7,319,405
	42,956,274
Ընդամենը ակտիվներ	**94,906,342**
Սեփական կապիտալ և պարտավորություններ	
Կապիտալ և պահուստներ	
Բաժնետիրական կապիտալ	550,000
Պահուստային կապիտալ	82,500
Կուտակված շահույթ	77,395,385
	78,027,885
	5,088,246
Ոչ ընթացիկ պարտավորություններ	
Վարձակալության գծով պարտավորություններ	5,010,131
Պայմանագրային պարտավորություններ	78,115
ընթացիկ պարտավորություններ	
Վարձակալության գծով պարտավորություններ	1,389,807
Ընթացիկ պարտավորություններ	1,420,521
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,111,326
Շահութահարկի գծով պարտավորություն	1,868,557
	11,790,211
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**94,906,342**

2020 թվականի վերջի դրությամբ Վիվա-ՄՏՍ-ի ֆինանսական վիճակը ցույց է տվել դրամական միջոցների և համարժեքների բավականին դրական մնացորդ: Ընթացիկ ակտիվները 3,6 անգամ գերազանցում են ընթացիկ պարտավորությունները:
Հիմնական միջոցները (արժեքը՝ 159 մլրդ 22 դրամ և կուտակված 128 մլրդ 22 դրամ մաշվածություն, որի արդյունքում գումարը կազմել է 31 մլրդ դրամ) կազմում են ոչ ընթացիկ ակտիվների ամենամեծ մասը, որը հիմնականում բաղկացած է հեռահաղորդակցության սարքավորումներից:

Ոչ նյութական ակտիվները (28 մլրդ դրամ արժեք և 17 մլրդ դրամ կուտակված մաշվածություն, որի արդյունքում գումարը կազմել է 11 մլրդ դրամ) հիմնականում ներառում են իրավունքներ և լիցենզիաներ:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները (10 մլրդ դրամ արժեք և 4 մլրդ դրամ կուտակված մաշվածություն, որի արդյունքում գումարը կազմել է 6 մլրդ դրամ) հիմնականում վերաբերում են ցանցային սարքավորումների տեղակայման իրավունքներին:

Տրամադրված փոխառությունները ներառում են «Mobile Telesystems» ԲԲԸ-ին ունեցած փոխառությունները:

Ընկերությունն ունի 550.000 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 1000 դրամ արժեքով: Կուտակված շահույթ՝ 10.5 մլրդ դրամի չափով շահաբաժիններ վճարելուց հետո 2020 թվականին պահպանում է նախորդ տարվա 77 մլրդ դրամ մակարդակը: Կրեդիտորական, ինչպես նաև դեբիտորական պարտքերը մոտավորապես 2019 թվականի մակարդակին են: Բացառություն է կազմում վճարման ենթակա եկամտային հարկի 1,7 մլրդ դրամով ավելացումը, քանի որ շ կառավարությունը երկարաձգեց հարկերի վճարման ժամկետները՝ որպես աջակցություն ընկերություններին՝ COVID-19 համավարակի ազդեցությունը տնտեսության վրա մեղմացնելու նպատակով:

Ընկերությունն ունի **550.000** սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ **1000 շդ** արժեքով:

Կուտակված շահույթ՝ **10.5 մլրդ շդ դրամի չափով՝** շահաբաժիններ վճարելուց հետո: 2020 թվականին պահպանում է նախորդ տարվա **77 մլրդ շդ դրամ** մակարդակը:

ԲԻԶՆԵՍ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԱՄՊԱՅԻՆ ԱՀԿ

Ամպային հեռախոսային կայանի ծառայությունը նախատեսված է մեծ, միջին և փոքր ընկերությունների համար:

Մուտքը ամպային ԱՀԿ ապահովվում է տվյալների փոխանցման և ինտերնետային կապուղիների (IP ցանցի) միջոցով՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ցանկացած վայրից: Ամպային ԱՀԿ-ն հնարավորություն է ընձեռում միևնույն ընկերության՝ աշխարհագրական տարբեր վայրերում տեղակայված գրասենյակները միավորել կորպորատիվ մեկ վիրտուալ «տանիք»-ի ներքո՝ տրամադրելով ներքին կարճ համարներ և մի շարք այլ ծառայություններ: ԱՀԿ-ն ունի ճկուն ենթակառուցվածք և պարզ ինտերֆեյս, ինչը թույլ է տալիս ընտրել այնպիսի կարգավորումներ, որոնք առավելագույնս համապատասխանում են ընկերության պահանջներին՝ ըստ գործունեության բնույթի ու առաջադրված խնդիրների:

CLOUD

Ենթակառուցվածքը որպես ծառայություն (Infrastructure as a Service, հապ.՝ IaaS). հաճախորդին բազմատեսակ ամպային ենթակառուցվածքների՝ սերվերների, տվյալների պահման համակարգերի, ինչպես նաև այդ ռեսուրսների կառավարման համար ծրագրային ապահովման տրամադրում: Հաճախորդի տեսակետից, նման մոտեցման հիմնական առավելություններից է թանկարժեք սարքավորում ձեռքբերելու անհրաժեշտության բացակայությունը, քանի որ այդ սարքավորման մի մասը հաճախ տևական ժամանակ չի օգտագործվում կամ աննպատակային է օգտագործվում: Հաճախորդը վճարում է միայն այդ ժամանակահատվածում իր կողմից օգտագործված ծառայության դիմաց և հնարավորություն ունի սահուն կերպով ավելացնել կամ նվազեցնել օգտագործվող ռեսուրսների ծավալը:

«VEEAM» ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՊԱՏՃԵՆՈՒՄ

- Վիվա-ՄՏՍ-ի ամպային տիրույթում տեղակայված բոլոր վիրտուալ սերվերների միասնական պահուստային պատճենում, ինչը, ցանկության դեպքում, կարելի է փոփոխել,
- Շաբաթական ամբողջական պահուստային պատճենում,
- օրական պահուստային պատճենում (միայն՝ թարմացված տվյալները),
- պահուստային պատճենների պահպանում՝ 14 օրվա ընթացքում
- պատահարների դեպքում տվյալների վերականգնում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՈՍԹԻՆԳ

Վիվա-ՄՏՍ-ն առաջարկում է դոմենների գրանցման և վեբ-հոսթինգի բարձրորակ ծառայություններ: Վեբ-հոսթինգը և դոմենն այն կարևոր բաղադրիչներն են, որոնցով հնարավոր է դառնում վեբ-կայքի աշխատանքը: Դոմենային անվանումը կայքի հասցեն է համացանցում: Դոմենային անվանումը ծառայում է դժվար հիշվող սերվերի հասցեն (IP-հասցեն) ավելի մատչելի և դյուրին անվան վերածելու համար: Վեբ-հոսթինգը համակարգչում (սերվերում) այն տեղն է, որը տրամադրվում է հաճախորդին՝ վեբ-կայքի բոլոր ֆայլերը, այդ թվում՝ բոլոր փաստաթղթերն ու բովանդակությունը պահպանելու համար:

TOLL-FREE

Օգտվեք «0-800 Toll-Free» ծառայությունից և Ձեր ընկերության հաճախորդներին թույլ տվեք ծանոթանալ ծառայություններին, տեսականուն և ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններն՝ անվճար զանգով:
Ծառայության շրջանակում համարին ստացված մուտքային զանգերի դիմաց վճարը գանձվում է զանգը ստացող կողմից:

ԿԱՐՃ ՀԱՄԱՐ

Դարձեք ավելի հասանելի Ձեր հաճախորդների համար: Բաժանորդագրվեք ընկերությունների ու ձեռնարկությունների համար նախատեսված՝ ֆիքսված կարճ համարի ծառայությանը և Ձեր հաճախորդներին ապահովեք ընկերության հետ կապ հաստատելու՝ ընդամենը չորս նիշից կազմված, հեշտությամբ մտապահվող համարով: Այս ծառայությամբ տրամադրվող կարճ համարի միջոցով Ձեր հաճախորդները մշտապես կարող են կապ հաստատել Ձեր ընկերության հետ՝ իրենց հետաքրքրող հարցերով:

ՖԻՔՍՎԱԾ ԼԱՅՆԱՇԵՐՏ ԻՆՏԵՐՆԵՏ

Բացահայտեք գործարար ոլորտի համար նախատեսված հաղորդակցման լուծումները.
• Սիմետրիկ կայուն գերարագ ինտերնետ,
• Վստահելիություն. ցանցի հասանելիության պահեստային կապուղիների ապահովում,
• Ճկունություն. ինտերնետի մուտք՝ տարբեր տեխնոլոգիաների միջոցով (FTTx, Radio Ethernet),
• Մի շարք հավելյալ առավելություններ՝ Wi-Fi հասանելիության ծածկույթների ստեղծում, վիրտուալ և հատկացված հոսթինգ, հաստատուն IP-հասցեներ, դոմենի գրանցում և աջակցություն:

DPRS

DPRS (Dual Path Redundant Service) ծառայությունն առաջարկում է պաշտպանության տարբերակներ՝ ապահովելով 99,95% անխափան աշխատանք:

CACHE ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոսթինգային քեշ-սերվերները թույլ են տալիս նվազեցնել բեռնվածությունը և ստանալ մատչելի քեշ տրաֆիկ Ձեր բիզնեսի համար:

SIP TRUNK

«SIP Trunk» սակագնային պլանը նախատեսված է այն կազմակերպությունների համար, որոնք աշխատանքի բերումով շատ են օգտվում ձայնային ծառայություններից և անխափան ու որակյալ հաղորդակցության կարիք ունեն, որը, միևնույն ժամանակ, վերահսկելի է ծախսի առումով: Այս սակագնային պլանի շրջանակում IP-ցանցի միջոցով մատուցվող ծառայությունների փաթեթները թույլ են տալիս ֆիքսված ամսավճարի դիմաց կատարել անվճար զանգեր՝ խմբի ներսում, ինչպես նաև ներցանցային զանգեր՝ հատուկ սակագներով:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՄՌ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վիվա-ՄՏՍ-ում ՄՌ-ի հիմնական առաքելությունը շուկայում առաջատար դիրքեր պահպանելն է՝ լինելով նախընտրելի գործատու: Մշտական թվային զարգացման շնորհիվ, ՄՌ-ը ձգտում է կանոնավոր կերպով բարձրացնել աշխատակիցների կատարողականը/կատարողականի մակարդակը՝ հետևողականորեն վարելով ճիշտ մշակույթ, երաշխավորելով ներգրավվածություն՝ դրանով ապահովելով պահանջներին համապատասխանող աշխատակիցների հավաքագրումը, աշխատուժի պահպանումը և աշխատակիցների մասնագիտական զարգացումը՝ Ընկերության ռազմավարությանը համապատասխան:

ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ

Մենք հավատում ենք, որ առաջատար թվային նորարարությունները կարող են բարելավել միլիոնավոր մարդկանց կյանքեր: «Մշտապես հավատարիմ մեր հաճախորդներին և ընդմիշտ հավատարիմ մեր երկրին». սա է այն կարգախոսը, որն օգնում է մեզ մշակել առողջ ռազմավարություն և սահմանել մեր ապագայի տեսլականը:

ՏՏ և հեռահաղորդակցության ոլորտը մեր տնտեսության ամենադինամիկ ոլորտներից մեկն է, և մենք շատ հպարտ ենք այս բնագավառում մեր ավանդը ներդնելու համար՝ այսպիսով բավարարելով մեր հաճախորդների, մեր շահառուների և մեր բաժնետերերի ակնկալիքները, ինչպես նաև երաշխավորելով մեր թիմի ճկուն մտքի զարգացումը՝ պատրաստ նոր վերափոխումների և մարտահրավերների: Սա հնարավոր է միայն մեր ընտանիքի անդամների նվիրվածության և ջանքերի շնորհիվ:

ՄԵՐ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Մեր առաքելությունն է մատուցել հեռահաղորդակցման նորարար ու որակյալ ծառայություններ: Իր գործունեության ամբողջ ընթացքում և բոլոր ոլորտներում Վիվա-ՄՏՍ-ը հավատարիմ է հետևյալ հիմնարար արժեքներին.

Նորարարություն

Մենք մշակում ենք առաջադեմ լուծումներ և հաջողությամբ կիրառում ենք դրանք:

Պատասխանատվություն

Մենք հոգում ենք այն ամենի մասին, ինչ անում ենք և պատասխանատվությամբ ենք վերաբերվում մեր քայլերին:

Հարգանք

Մեր բոլոր քայլերի հիմքում էթիկայի կանոններն ու մարդկային արժեքներն են:

Թիմային աշխատանք

Մենք աշխատում ենք ազնվորեն՝ կիսելով համատեղ հաջողության արդյունքները:

Հավատարմություն

Մեզ համար կարևոր են հավատն ու հավատարմությունը:

ՄԵՐ ԹԻՄԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՄԵՐ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆԵՐՆ ԵՆ

Մեր ընտանիքը բաղկացած է մոտ 1300 աշխատակցից, որոնք ցուցաբերում են բարձր նվիրվածություն ու ներգրավվածություն և կազմում են իրենից արժեք ներկայացնող թիմի մաս: Չնայած մեզանից յուրաքանչյուրն ունի շատ յուրահատուկ տաղանդներ, պատմություն և ունակություններ, մենք միշտ հոգ ենք տանում, որ մեր հավաքական ոգին պահպանվի՝ շնորհիվ մեր հիմնարար արժեքների՝ նորարարություն, պատասխանատվություն, հարգանք, հավատարմություն և թիմային աշխատանք: Մենք ապրում և շնչում ենք այդ արժեքներով, որովհետև դրանք մեր ճշմարտության, մեր ավյունի և մեր ուժի հիմնասյուներն են ինչպես մեր ընտանիքի անդամների, այնպես էլ, առհասարակ՝ մեր հայ հասարակության համար: Մեր հաջողության բանալին հիմնականում հանդիսացել է մեր ընտանիքի անդամների հանդեպ հետևողական մարդկային վերաբերմունքը և նրանց անձնային և մասնագիտական կայացման ապահովումը:

Ընդհանուր առմամբ, մենք կարծում ենք, որ մեր աշխատակիցների հավատարմությունը առաջին հերթին պայմանավորված է դրական, խրախուսող և աջակցող աշխատանքային միջավայրով: Հոգեբանական անվտանգությունը Ընկերության ղեկավարության համար մշտապես կենսական խնդիր է եղել: Այն երաշխավորում է, որ անձնակազմի անդամներն ապահով զգան ինքադրսևորման դեպքում և համոզված լինեն, որ հարգված են, գնահատված և կարող են ակնկալել մշտական աջակցություն: Մենք իրապես այն համոզմունքն ունենք, որ երբ մարդիկ աշխատավայրում իրենց ապահով և վստահված են զգում, նրանք եռանդով ներգրավվում են նոր նախագծերին, նոր զարգացումներին և ապագա հեռանկարներին առնչվող նախաձեռնություններում:

Սա նկատի ունենալով՝ մենք սկսել ենք մի քանի ներքին նախագծեր՝ օգնելու աշխատակիցներին իրենց գնահատված զգալ ոչ միայն իրենց ղեկավարների, այլև իրենց գործընկերների կողմից:

«Lucky Carrot» ծրագիրն օգնում է աշխատակիցներին ճանաչել և գնահատել այլ գործընկերների հաջողությունը՝ շնորհակալական հաղորդագրություններ ուղարկելով նրանց և նվիրելով վիրտուալ գազար՝ ըստ ստացողի կողմից պահպանած՝ Ընկերության հիմնարար արժեքների: Միևնույն ժամանակ, Մեր մոլորակը՝ Վիվա-ՄՏՍ-ի ներքին պորտալը, աշխատակիցներին հնարավորություն է տալիս հետևողականորեն տեղեկացված լինել Ընկերության հետ կապված բոլոր որոշումների կամ նորությունների մասին, որպեսզի նրանք միշտ լինեն Ընկերության պլանների, գործողությունների և առաջարկությունների անբաժանելի մասը՝ անկախ տանը, թե գրասենյակում աշխատելու փաստից:

ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեր հաճախորդներին և մեր համայնքի անդամներին Հայաստանում մենք մոտենում ենք այն նույն հոգատարությամբ, ինչը ցուցաբերում ենք մեր աշխատակիցների նկատմամբ, մասնավորապես՝ կորպորատիվ պատասխանատվության մեր առաջամարտիկ ջանքերի շնորհիվ: Դեռևս տասնհինգ տարի առաջ՝ մեր ծննդյան օրվանից ի վեր, Վիվա-ՄՏՍ-ը բաց չի թողել առանցքային պատասխանատու դերակատար դառնալու հնարավորությունը, մասնավորապես՝ շնորհիվ իր իրական և ազնիվ արժեհամակարգի:

ՄԱՐԴՈՒ ԵՎ ԱՇԽԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Վիվա-ՄՏՍ-ը հավասար հնարավորություններ ընձեռող գործատու է, որը բազմաբնույթ և ներառական աշխատանքի հնարավորություններ է ապահովում բոլոր աշխատակիցների համար: Մեր Ընկերությունը առաջնահերթություն է տալիս բոլորի նկատմամբ հարգանքին և աշխատակիցների շահերին:

Մեր աշխատակիցներն իրավունք ունեն աշխատելու անվտանգ և առողջ միջավայրում: Նրանք ունեն արդար և հավասար վերաբերմունքի իրավունք: Վիվա-ՄՏՍ-ը չի հանդուրժում որևէ խտրականություն, մասնավորապես՝ երեխաների և հարկադիր աշխատանք, սեռական, ռասայական, էթնիկ պատկանելիության, մաշկի գույնի, լեզվի, ծագման, սոցիալ-տնտեսական կարգավիճակի, տարիքի, բնակության վայրի, դավանանքի, քաղաքական հայացքների հետ կապված որևէ խտրականություն: Սա վերաբերում է Ընկերության բոլոր գործընթացներին և ընթացակարգերին, ներառյալ՝ հավաքագրումը, անձնակազմի զարգացումը, առաջխաղացումը և կարգապահական միջոցները: Խտրականությունը, անուշադրությունը, հանդիմանություններն ու այլ տեսակի ճնշումները խստորեն արգելվում են: Վերջապես, Վիվա-ՄՏՍ-ում խստիվ արգելում են ահաբեկումները և ոտնձգությունները, ներառյալ՝ ֆիզիկական կամ սեռական բնույթի ակնարկները, այլ անձի աշխատանքին խոչընդոտելը կամ վախի, թշնամանքի կամ լարվածության մթնոլորտ ստեղծելը: Ընկերությունը պարտավորվում է իր աշխատակիցների և Ընկերության հետ աշխատող կամ համագործակցող ցանկացած անձի համար ապահովել առավելագույնս անվտանգ և հուսալի պայմաններ:

Աշխատակիցների կամ մարդու իրավունքներին առնչվող բոլոր սկզբունքներին համապատասխանությունը ամենաբարձր չափանիշներին համապատասխան ապահովելու նպատակով՝ Վիվա-ՄՏՍ-ը պարբերաբար թարմացնում և տարածում է նշված սկզբունքներն ընդգրկող իր էթիկայի կանոնները, որը նաև հիմնվում է հետևյալի վրա.

• Իրավական համապատասխանություն տարբեր բնագավառներում, հակակոռուպցիոն օրենսդրություն, մրցակցության մասին օրենք, առևտրային գաղտնիքների պաշտպանություն, կորպորատիվ արժեքների հարգում, խուսափում շահերի բախումից (երբ անձնական շահերը հակասում են ընկերության շահերին), խարդախության կանխարգելում, ինչպես նաև ազնիվ և վստահելի բիզնես վարքագիծ:

• Ակնկալվում է, որ Վիվա-ՄՏՍ-ի յուրաքանչյուր աշխատակից պետք է գործի ազնիվ ու թափանցիկ՝ այլ անձանց հետ գիտելիքներ, փորձ փոխանակելով, միմյանց նկատմամբ հարգալից վարվելով, միմյանց տեսակետներն ու կարծիքները գնահատելով:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վիվա-ՄՏՍ-ի ազնիվ համբավը և հեղինակավոր դիրքը պահպանելու համար վերջինս ներդրել է հակակոռուպցիոն, համապատասխանության և տեղեկատվական անվտանգության քաղաքականություն՝ երաշխավորելու կոռուպցիայի դեմ պայքարի ամենաարդի գործիքների ներդնումը, խթանելու Ընկերության ներսում էթիկական վարքագիծը, խուսափելու կոռուպցիայի հետ կապված ռիսկերից կամ ծախսերից, պաշտպանելու ֆիզիկական անձ հանդիսացող, ինչպես նաև կորպորատիվ հաճախորդներին, ապահովելու տեղեկատվության անվտանգությունը և աջակցելու բիզնեսի ընդհանուր առողջ ընդլայնմանը: Այս քաղաքականության արդյունավետության ապահովումը հանձն է առել առաջին հերթին Ընկերության ղեկավարությունը՝ օրինակ ծառայելով և առաջնորդելով Ընկերության մնացած անդամներին, ինչպես նաև՝ ապահովելով Վիվա-ՄՏՍ-ում կոռուպցիան կանխելու ճիշտ մշակույթի պահպանումը:

Ողջ անձնակազմը, ներառյալ՝ ղեկավարությունը, կանոնավոր կերպով անցնում է վերապատրաստումներ և դասընթացներ, ներգրավված է այս քաղաքականությունների մշակման և թարմացման գործընթացներում, ինչպես նաև մասնակցում է բոլոր տարեկան աուդիտորական ստուգումներին (այդ թվում՝ ISO-ի հետ կապված):

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Վիվա-ՄՏՍ-ի կազմակերպական կառուցվածքը կենդանի օրգանիզմ է, որը փոխվում է բիզնեսի կարիքներին և պահանջվող գործառույթներին համապատասխան: Այն օգնում է ավելի հստակ պատկերացնել այն ուղղությունը, որով գնում է Ընկերությունը՝ ապահովելու արագ որոշումների կայացում և հետևողականություն: Կառուցվածքը փոփոխվել է ժամանակի ընթացքում՝ փորձելով նվազագույնի հասցնել վերահսկողության շրջանակը, կառավարել սպասելիքները, կազմակերպել աշխատանքային հոսքը և աջակցել ներգրավվածությունը և արտադրողականությունը:

Ներկայումս Վիվա-ՄՏՍ-ի կազմում ընդգրկված են հետևյալ վարչությունները.

- Բաժանորդների սպասարկման վարչություն
- Ֆինանսների և հաշվապահության վարչություն
- Մարդկային ռեսուրսների վարչություն
- Տեխնիկական վարչություն
- Տեղեկատվական համակարգերի վարչություն
- Ադմինիստրատիվ ծառայությունների վարչություն
- Ներքին վերահսկողության և աուդիտի վարչություն
- Մարքեթինգի և հաղորդակցման վարչություն
- Կորպորատիվ կառավարման և իրավաբանական վարչություն
- Անվտանգության բաժին

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Մենք ձգտում ենք ապահովել, որ մեր կատարողականի կառավարման և պարգևատրման գործընթացները համահունչ լինեն Ընկերության ռազմավարությանը, բիզնես նպատակներին և մշակույթին: Մեր մշակույթի ներդրման հիմնական մասն է երաշխավորել, որ մենք պարգևատրենք մեր աշխատակիցներին՝ հիմնվելով նրանց կատարողականի, ներուժի և մեր արժեքների և հաջողության մեջ նրանց ունեցած ներդրման վրա:

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի ընդհանուր կատարողականի վրա հիմնված պարգևավճարներից կամ պարգևատրումներից, մենք նաև ձգտում ենք առաջարկել մրցակցային փոխհատուցման փաթեթ՝ ամբողջ անձնակազմի համար: Դժվար ժամանակներ են, և մենք հասկանում ենք, որ մեր աշխատակիցները պետք է հոգ տանեն իրենց սեփական ընտանիքների մասին: Ուստի, մենք փորձում ենք մեղմել անձնակազմի հոգսերը՝ առաջարկելով որոշակի առավելություններ, որոնք կարող են օգնել լուծել առօրյա խնդիրները:

ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Իր աշխատակիցների և նրանց կարիքների մասին իրապես հոգ տանող աշխատանքային միջավայրից բացի, Վիվա-ՄՏՍ-ը մշակել է վարձատրության քաղաքականություն, որը համապատասխանում է նաև տաղանդների ներգրավման և նրանց պահպանման կարևորագույն կարիքի բավարարմանը՝ մրցունակ տեղական շուկայի պայմաններում: Առաջնորդվելով արդարության և հավասարության սկզբունքներով՝ Վիվա-ՄՏՍ-ը միշտ գնահատում և փոփոխում է իր վարձատրության համակարգը՝ ապահովելով, որ իր աշխատակիցներն արդարացիորեն հատուցվեն ոչ միայն Ընկերության, այլև շուկայի մակարդակով:

Հավելավճար

(Ընկերության փոխհատուցման պլան, այլ փոխհատուցում՝ ըստ օրենքի) **3%**

Պարգևավճար

(Փոփոխական պարգևավճարներ՝ համաձայն Ընկերության քաղաքականության) **26%**

Աշխատավարձ

(Բազային աշխատավարձ, գիշերային աշխատանքի վարձատրություն, արձակուրդներ, գործատուի կողմից սոցիալական հարկ) **71%**

Վիվա-ՄՏՍ-ում կատարողականի գնահատման գործընթացները ներառում են կորպորատիվ ցուցանիշ (ընդհանուր բիզնեսի հետ կապված կատարողական) և անհատական թիրախներ (կազմված առանձին աշխատակցի գործառույթներին համապատասխան):

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

«Վիվա-ՄՏՍ» ընկերությունը գիտակցում է, որ իր հաջողության գրավականն իր աշխատակիցներն են, հետևաբար, վերջիններս հնարավորություն ունեն շարունակաբար ձեռք բերելնոր գիտելիքներ՝ ինչպես տեխնիկական, այնպես էլ անձնային հմտությունների հետ կապված, և մշտապես ապահովեն բարձր և առողջ ներգրավվածության և կատարողականի մակարդակ: Սակայն, Covid-19 համավարակով պայմանավորված, Ընկերությունը ձգտում է արագորեն վերամշակել իր զարգացման ծրագրերը՝ օգնելու անձնակազմին պահպանել իր ճկունությունն ու եռանդը: Այս նպատակով, Ընկերությունը ապահովելում է իր զարգացման ծրագրերի առցանց փոխանցումը և առաջարկում էլեկտրոնային ուսուցման ճկուն դասընթացներ:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ/ ՄԵՐ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԿԱՌԱՎԱՐՎՈՒՄ

Մեր ընկերությունը գործում է՝ խստագույնս պահպանելով տնտեսական մրցակցության պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները: Այս օրենքն արգելում է ցանկացած գործունեություն, որը կարող է հանգեցնել մրցակցության սկզբունքների խախտման և շուկայի մենաշնորհացման: Բարձրաստիճան ղեկավարությունը հետևում է ապրանքների և ծառայությունների համապատասխանությանը իրավական պահանջներին:

Վիվա-ՄՏՍ-ի աշխատակիցները տեղյակ են և պարտավոր են շարժվել գործող օրենքներին, կանոններին և կանոնակարգերին համապատասխան, ինչպես նաև՝ հետևել Վիվա-ՄՏՍ-ի քաղաքականությանը և ընթացակարգերին: Վիվա-ՄՏՍ-ի աշխատակիցներին արգելվում է խրախուսել որևէ երրորդ կողմի կատարել կամ անձամբ մասնակցել որևէ գործողության, որը խախտում է օրենքները, կանոնները և կանոնակարգերը, ինչպես նաև Ընկերության քաղաքականությունն ու ընթացակարգերը:

Պետական օրենսդրության համապատասխանության հետ մեկտեղ, Ընկերությունը հետևում է նաև մի շարք ներքին սկզբունքների, որոնք առաջնահերթություններ են նաև կորպորատիվ կառավարման համար.

- Հակակոռուպցիոն նորմերն ու կանոնակարգերը
- Խարդախությունների (ֆրոդի) կանխարգելումը
- Բարեխիղճ գործարար պրակտիկան
- Ռիսկերի կառավարումը
- Պատասխանատու մատակարարման շղթան

Մեր ընկերությունը որդեգրել է Հակակոռուպցիոն ծրագիր՝ միտված Ընկերությունում հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների պահպանմանը:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆՈՐՄԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԸ

Դրանք ապահովում են Ընկերության կողմից օրինականության, թափանցիկության և սոցիալական պատասխանատվության սկզբունքների պահպանումը, ինչպես նաև իր բարձր հեղինակության պահպանումը պետության, իր հաճախորդների, գործընկերների, մրցակիցների և ողջ հասարակության առջև: Դրանք սահմանում են Ընկերության և/կամ իր աշխատակիցների կողմից (նկատմամբ) կոռուպցիոն գործողությունները կանխելու սկզբունքները, ինչպես նաև՝ հակակոռուպցիոն օրենսդրության պահպանման սկզբունքները և որևէ երկրում իրականացված տնտեսական գործունեության ժամանակ Ընկերության կողմից կոռուպցիայի ցանկացած դրսևորման կանխարգելման սկզբունքները:

Մեր կողմից հակակոռուպցիոն օրենսդրության պահպանումը ենթադրում է ոչ միայն Հայաստանի առանց այն էլ խիստ հակակոռուպցիոն օրենսդրությանը հետևելը, այլ նաև՝ FCPA-ի և UKBA-ի օրենսդրական հիմնական պահանջներին համապատասխանելը: Հակակոռուպցիոն օրենսդրությունը տարածվում է Տնօրենների խորհրդի, ինչպես նաև բոլոր աշխատակիցների, ներկայացուցիչների, դուստր ընկերությունների, դրանց կառավարման մարմինների և աշխատակիցների վրա:

Ավելին, այն նաև տարածվում է Ընկերության հովանավորչական և բարեգործական գործունեությունը կանոնակարգող բոլոր նորմատիվային փաստաթղթերի և գործընթացների վրա: Նշված գործունեությանն առնչվող ֆինանսական գործարքները հստակ արտացոլվում են հաշվապահական հաշվետվություններում, և իրականացվող ծրագրերը հավելյալ կերպով համաձայնեցվում են: Բարեգործական ներդրումների մոնիթորինգը թույլ է տալիս խուսափել ներդրված գումարների՝ որպես թաքնված կամ առևտրային կաշառք, օգտագործումից: Ընկերության ղեկավարությունը անհրաժեշտ անվտանգության միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու բոլոր քաղաքական ներդրումների և բարեգործական նվիրատվությունների օրինականությունը՝ համաձայն գործող հակակոռուպցիոն օրենսդրությանը:

Ընկերության ողջ աշխատակազմն անցել է հակակոռուպցիոն օրենսդրության համապատասխանության ծրագրի, հակակոռուպցիոն ձեռնարկի կարևորագույն պահանջների և կոռուպցիայի խոցելի ոլորտների և այդ ռիսկերի նվազեցման վերաբերյալ ուսուցում: Ընկերությունն ունի նաև համապատասխանության քաղաքականություն, որը սահմանում է Ընկերության, ինչպես նաև շահակիցների համար նվերների և զվարճանքի կանոնները:

Ընկերությունն իր աշխատակիցների մասնակցությամբ կոռուպցիայի ոչ մի դեպք չի գրանցել. հակակոռուպցիոն ծրագրի պատշաճ իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ամեն օր՝ ներքին վերահսկողության և համապատասխանության գծով թիմի կողմից:

Ընկերությանը խարդախության գործողություններից զերծ պահելու համար մենք մշակել ենք բազմաթիվ գործընթացներ, քանի որ դա դիտարկում ենք որպես մեր երկարաժամկետ բիզնեսի հաջողության սպառնալիք: Մենք խարդախությունը համարում ենք ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց կանխամտածված գործողություն կամ անգործություն՝ միտված Ընկերության հաշվին շահույթ ստանալուն և/կամ նյութական և/կամ ոչ նյութական վնաս պատճառելուն: Խարդախության օրինակներից են ֆինանսական հաշվետվությունների կեղծումը, SIM քարտերի կլոնավորումը, Ընկերության գույքի հափշտակումը և այլն: Խարդախություն կարող է համարվել նաև կապի ցանցերում անձանց կանխամտածված գործունեությունները, ներառյալ՝ խարդախ, անօրինական մուտքը ծառայություններին և առանց վճարի՝ օպերատորի ռեսուրսների օգտագործումը, օպերատորի ցանկացած գաղտնի տեղեկատվությանը անօրինական և շահույթ ստանալու նպատակով մուտքը, ինչպես նաև օպերատորին վնաս պատճառելու այլ գործողությունները: Վիվա-ՄՏՍ-ում մենք սահմանել ենք խարդախությունների կանխարգելման, բացահայտման, գնահատման, հետաքննման և հետևանքների նվազեցման գործողություններ՝ մեր բիզնեսի հուսալիության, ազնիվ հեղինակության պահպանման և հաջողության ապահովման համար: Սա ներառում է, ի թիվս այլոց, «խարդախությունների կանխարգելման քաղաքականության» և շահերի բախման դեպքում վարքագծի վերաբերյալ խիստ կանոնակարգերի կամ «խարդախության տվյալների բազայի» պահպանումը: Այս ավտոմատացված համակարգը նախատեսված է համակարգման, պահեստավորման և վերլուծության համար, ինչպես նաև՝ մի քանի բիզնես միավորումների հետ գիտելիքների և փորձի փոխանակման համար.

- Անվտանգության բաժին
- Կոմերցիոն վարչություն
- Ֆինանսների և հաշվապահության վարչություն
- Կառավարման, ռիսկերի և վերահսկողության վարչություն
- Ադմինիստրատիվ ծառայությունների վարչություն
- Տեղեկատվական համակարգերի վարչություն
- Տեխնիկական վարչություն

Այն հավաքում կամ վերլուծում է լավագույն բիզնես գործընկերների և մրցակիցների գործունեության մասին տեղեկատվությունը, նրանց կողմից կիրառվող կառավարման մեթոդները, ինչպիսիք են՝ լավագույն տեխնոլոգիաների, արտադրական գործընթացի և արտադրության և ծառայությունների կազմակերպման և մարքեթինգային մեթոդների հետազոտությունը:

Վիվա-ՄՏՍ-ի բոլոր աշխատակիցները պարտավոր են իրենց աշխատանքները կատարել առավել արդյունավետ, և, որպես այդպիսին, Ընկերությունն արգելում է բոլոր տեսակի շահերի բախումները: Շահերի բախում կարող է առաջանալ, երբ առկա է անձնական շահ կամ վերջինս վտանգված է, և երբ համապատասխան որոշումները կարող են բացասաբար ազդել Ընկերության շահերի վրա:

Ընկերության շահերը և բրենդը պետք է առաջնահերթ լինեն Վիվա-ՄՏՍ-ի աշխատակիցների կողմից ընդունված բոլոր որոշումների և գործողությունների համար: Նույնիսկ շահերի բախման անշան դրսևորումը կարող է վնաս հասցնել Ընկերության համար կարևոր նշանակության շահերին:

Վիվա-ՄՏՍ-ում աշխատող անհատները միշտ պետք է գործեն Ընկերության նկատմամբ իրենց ստանձնած պարտականություններին համահունչ եղանակով և առանձնահատուկ միջոցներ պետք է ձեռնարկեն՝ զերծ պահելու Ընկերությունը իրենց և Ընկերության շահերի միջև բախումների հետևանքով առաջացած վնասներից:

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՖՐՈԴԻ) ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Շահերի բախման մասին մեր քաղաքականությունը բացառում է որևէ աշխատակցի կողմից, Ընկերության շահերին ի վնաս, անձնական շահի գերակայությունը: Այն սահմանված է երաշխավորելու բոլոր աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը էթիկայի կանոնների բարձր մակարդակին: Այն վերաբերում է ցանկացած այնպիսի իրավիճակի, երբ աշխատողները հնարավորություն ունեն չարաշահելու իրենց մասնագիտական կամ պաշտոնական դիրքը անձնական նպատակներով, ինչպես նաև՝ բոլոր սեփականատիրական, գործընկերական ընկերակցություններին, միավորումներին, համատեղ ձեռնարկություններին, կորպորացիաներին, ընկերություններին, հիմնադրամներին կամ առևտրային և բիզնես մարմիններին կամ այլ կազմակերպություններին, ներառյալ՝ այդ մարմինների վերադաս կազմակերպություններին կամ ցանկացած այլ պայմանավորվածություններին, որտեղ կազմակերպությունը գործում է դուստր կազմակերպության միջոցով:

Շահերի բախման մասին մեր քաղաքականությունը վերաբերում է դրամական, ոչ նյութական և արժեքավոր նվերներին, ինչպես նաև՝ գաղափարներին, գյուտերին, տեխնոլոգիաներին, ստեղծագործական մտքին, որոնց դեպքում ներգրավված են մասնավոր շահերը, ներառյալ, բայց չսահմանափակվելով, արտոնագրեր, հեղինակային իրավունքներ, ապրանքային նշաններ, «նոու-հաու», հեռահաղորդակցության ապրանքատեսակներ և տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված ապրանքատեսակներ: «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի յուրաքանչյուր աշխատակից ստորագրում է հայտարարագիր, որով հաստատում է, որ ստացել, ծանոթացել և հասկացել է շահերի բախման մասին քաղաքականությունը: Աշխատակիցները հավաստում են իրենց համաձայնությունը՝ համապատասխանելու քաղաքականության պահանջներին, և Ընկերությունում աշխատելու ողջ ժամանակահատվածում հնարավոր շահերի բախման իրավիճակ համարվող ցանկացած փաստացի կամ հավանական դեպքի զեկուցման մասին:

ԲԱՐԵԽԻՂՃ ԳՈՐԾԱՐԱՐ ՊՐԱԿՏԻԿԱ

Վիվա-ՄՏՍ-ը շահույթ հետապնդող կազմակերպություն է: Այնուամենայնիվ, այդ շահույթի ձեռքբերման եղանակը մեզ համար չափազանց կարևոր է: Մենք հավատարիմ ենք խիստ բարոյական եղանակով բիզնեսի վարման սկզբունքին: Սա է պատճառը, որ մենք մշակել ենք էթիկայի կանոններ՝ հիմնվելով մեր հիմնարար արժեքների վրա, որոնք տեղակայված են նաև մեր կայքում: Էթիկայի կանոնների ժողովածուն սահմանում է Վիվա-ՄՏՍ-ի աշխատակազմի պրոֆեսիոնալ վարքագծի և աշխատանքային պարտականությունների համար նախատեսված սկզբունքներն ու էթիկայի ստանդարտները: Այս սկզբունքներն ու ստանդարտները պետք է ծառայեն որպես ուղեցույց՝ մեր ամենօրյա մասնագիտական գործունեության համար: Դրանք ձևավորում են նորմերն ու չափանիշները և ուղղություն տալիս աշխատանքային գործունեության ընթացքում հնարավոր խնդիրների լուծման համար:

Վիվա-ՄՏՍ-ում մենք միշտ ձգտում ենք պահպանել օրինականությունը, գործել արդար և ծավալել մեր գործունեությունը՝ ի օգուտ հասարակության, որում մենք աշխատում ենք: Էթիկական մասնագիտական վարքագծի պահպանումն ակնկալվում է և պարտադիր է Վիվա-ՄՏՍ-ի յուրաքանչյուր աշխատակցի համար:

Էթիկայի կանոնները հասանելի են Վիվա-ՄՏՍ-ի ողջ աշխատակազմին՝ ներքին պորտալի միջոցով, և ներկայացվում են ցանկացած նոր աշխատակցի՝ իրազեկման հանդիպումների ժամանակ: ՄՌ վարչության աշխատակիցները ցանկացած պահի պատրաստ են ուղղորդել բոլորին՝ նման հարցերի և անորոշ իրավիճակների դեպքում:

Տեղեկատվության գաղտնիությունը և օրենքի պահանջների կատարումը երաշխավորված են: Վիվա-ՄՏՍ-ը ստեղծել է նաև թեժ-գիծ՝ ապահովելու հարգալից և բաց աշխատանքային միջավայր: Հատկապես կարևոր է, որ աշխատակիցների հանդեպ լինի արդարացի վերաբերմունք, և նրանք ժամանակին ստանան արձագանք իրենց անհանգստություններին ու խնդիրներին: Միևնույն ժամանակ, Վիվա-ՄՏՍ-ի թեժ գիծը ստեղծվել է ֆինանսական և հաշվապահական, ներքին վերահսկողության և աուդիտի, վաճառքի, գնումների և հաճախորդների սպասարկման, ինչպես նաև պայմանագրային հարաբերությունների և բիզնեսի համար

նշանակալից շատ այլ գործընթացների շրջանակում՝ համապատասխան ռիսկերի և խարդախությունների, չարաշահումների և խախտումների մասին հավանական փաստերի վերհանման, դրանց դեմ պայքարի և կանխարգելման արդյունավետության բարձրացման համար: Մշտապես ձեռնարկվում են համապատասխան միջոցներ՝ զեկուցված բոլոր խախտումների բացահայտման համար:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Մենք կիրառում ենք Ռիսկերի ինտեգրացված կառավարման գործընթաց՝ կարևորագույն ռիսկերի կառավարման հարցում Վիվա-ՄՏՍ-ի կառուցվածքային ստորաբաժանումների համակարգման համար: Դրա նպատակն է ապահովել Ընկերությանը կարևորագույն ռիսկերի մասին համապատասխան տեղեկատվությամբ, ժամանակին ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ՝ արձագանքելու և տրամադրելու Ընկերության ղեկավարությանը և ներգրավված ստորաբաժանումներին մեր տնտեսական, էկոլոգիական և սոցիալական գործունեությանն առնչվող կարևորագույն ռիսկերի մասին վերլուծություն: Յուրաքանչյուր ռիսկ ունի իր մանրամասն վերլուծությունը, որը պարունակում է ռիսկի վերաբերյալ փաստացի տեղեկատվություն, ներառյալ՝ ռիսկի նկարագրությունը, ռիսկի գնահատումը, կանոնակարգային ընթացակարգերի ցանկը, լրացուցիչ միջոցները, պատասխան գործողությունները, ռիսկերի իրականացման դեպքերը, մոնիթորինգի արդյունքների եռամսյակային ամփոփագիրը: Միջոցառումներն ուղղված են ռիսկերի իրականացման հետևանքների նվազեցմանը և դրանց՝ Կանխարգելիչ և արտակարգ իրավիճակների միջոցառումների պլանում արտացոլմանը:

Ռիսկերի վրա հիմնված պլանային և արտահերթ ներքին աուդիտորական աշխատանքներն իրականացվում և զեկուցվում են Տնօրենների խորհրդին: Վիվա-ՄՏՍ-ը բոլոր մատակարարներին առաջարկում է արդար մրցակցության կամ սակարկության պայմաններ: Վիվա-ՄՏՍ-ի գնումների քաղաքականության հիման վրա մրցույթի կամ այլ արդարացի և ողջամիտ եղանակներով իրականացվում է մատակարարի որակավորման, ապրանքի/ծառայության որակի, հեղինակության ներառական, անկախ, օբյեկտիվ և արդար գնահատում:

Մեր գնումների շուրջ 52%-ը կատարվում է տեղական մատակարարներից: Մենք հետևում ենք անբարեխիղճ մրցակցությունը կամ մենաշնորհը, կոռուպցիան և կաշառքը բացառող օրենքներին և կանոնակարգերին: Մենք պաշտպանում ենք Ընկերության օրինական շահերը և մերժում ենք կաշառքները, չարտոնագրված վճարումների միջոցով զեղչերը կամ մատակարարի կողմից առաջարկվող նյութական արտոնությունները: Մենք հավատարիմ ենք Վիվա-ՄՏՍ-ի կորպորատիվ մշակույթին և հարգում ենք մատակարարի կորպորատիվ մշակույթը, մատակարարներին և նրանց ներկայացուցիչներին վերաբերվում ենք ընդունված վարվելակարգին համապատասխան և մատակարարի տեղեկությունները խիստ գաղտնի ենք պահում՝ օրենսդրությանը և ձեռք բերված փոխադարձ համաձայնությանը համապատասխան:

Ընկերության նպատակն է իր անմիջական մատակարարների հետ սեփական մատակարարման շղթայի միջոցով ստեղծել սոցիալական և բնապահպանական չափանիշներ: Այս նպատակով, մենք բարելավում ենք ԿՍՊ արդյունավետության և մատակարարման շղթայի կառավարման գործընթացները: Ինտեգրելով Ընկերության ԿՍՊ ստանդարտները մեր գնումների ընթացակարգերում՝ մենք կարող ենք պահպանել մեր հեղինակությունը և ներդրում ունենալ այն հասարակությունում, որտեղ մեր մատակարարները ծավալում են ակտիվ գործունեություն:

Մենք ակնկալում ենք մեր մատակարարներից որոշակի չափորոշիչների կիրառում՝ աշխատանքի, էթիկայի, անվտանգության և շրջակա միջավայրի պահմանման ոլորտներում (ԿՍՊ դրույթի հիման վրա): Համապատասխանությունը չափորոշիչներին ստուգվում է հարցաշարերի և մատակարարների հետ քննարկումների միջոցով: Ռազմավարական մատակարարի վերաբերյալ իրականացվում են մանրամասն վերլուծություններ՝ պարզելու ԿՍՊ առնչվող ռիսկերը, և մշակվում են համապատասխան բարելավման պլաններ՝ բարձր ռիսկի մատակարարների համար:

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը արտացոլում է մասնավոր կամ պետական ոլորտում գործող ցանկացած առևտրային և այլ կազմակերպության նվիրումը այն հասարակությանը, որում գործում է այդ կազմակերպությունը:

Փաստն այն է, որ ընկերություններն իրենց գործունեության, արտադրանքի, ծառայությունների, ինչպես նաև հիմնական շահառուների՝ այն է՝ աշխատողների, հաճախորդների, ներդրումներ կատարողների, տեղական համայնքների, մատակարարների և մյուսների հետ շփման հետևանքով ազդեցություն են ունենում հասարակության և շրջակա միջավայրի վրա:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը նշանակում է ճանաչել և գիտակցել այդպիսի ազդեցությունները և կառավարել բիզնեսն այնպես, որ այն նպաստի սոցիալական, բնապահպանական և տնտեսական արժեքների աճին՝ այդպիսով կայուն դրական ազդեցության գործելով թե՛ հասարակության և թե՛ բիզնեսի վրա: Այլ կերպ ասած, ԿՍՊ-ն իրենից ներկայացնում է կենդանի կառավարչական լեզու, որը ներթափանցում է յուրաքանչյուր գործառույթի սահման և չի կարող սահմանափակվել առանձին վարչությունների կողմից իրականացվող, իրարից մեկուսացված ծրագրերով:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՎԱ-ՄՏՍ-Ի ՀԱՄԱՐ

Վիվա-ՄՏՍ-ի համար Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը նշանակում է մշակել և կառուցել սոցիալական և գործնական այնպիսի փոխհարաբերություններ, որոնք հիմնված են հարգանքի, էթիկայի, նվիրումի, պատասխանատվության և վստահության վրա, ապահովել առողջ և ապահով աշխատատեղեր, մասնագիտական կատարելագործմանը և անհատական պատասխանատվությանը նպաստող միջավայր, աշխատանքի ընդունելության իրավունքի և հնարավորության հավասար սկզբունքներ, մատակարարների հետ ազնիվ հարաբերություններ և բոլոր քաղաքացիների համար որակյալ ծառայություններ:

Վիվա-ՄՏՍ-ի ԿՍՊ տեսլականն է ավելի բարձրացնել մեր համբավը՝ ներկայանալով և ամրապնդելով Ընկերության դիրքը՝ որպես առաջնակարգ տեղական ֆինանսական և տնտեսվարող կառույց, որը գործում է ի շահ Հայաստանի ժողովրդի, Հայաստանի և հայության: Վիվա-ՄՏՍ-ը լի է հավատով առ այն, որ ի զորու է ընկալելի դարձնել Կորպորատիվ պատասխանատվության բազմաշերտ և զարգացող էությունը՝ հուսալով, որ կհաջողվի օրինակ ծառայել, և որ այլ կազմակերպությունները կհետևեն այդ օրինակին:

Բարեկեցությունը չի կարող բազմապատկվել մեկուսացման մեջ: Մենք այդ ամենին պետք է հասնենք ձեռք ձեռքի տված, և պետք է միասին քայլենք դեպի ապագա Հայաստան:

ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

Մինչև 2020 թվականը, ԿՍՊ գործունեության շրջանակներում Վիվա-ՄՏՍ-ը համագործակցել է հետևյալ կազմակերպությունների հետ.

- «Հայաստան» համահայկական հիմնադրամ
- «Կատալիստ» բարձր տեխնոլոգիաների և ձեռներեցության զարգացման հիմնադրամ
- Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (UNDP)
- Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միություն (ՏՀՏԳՄ)
- «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամ
- «Ունիսոն» ՀԿ
- «ՍՈՐՍ» հիմնադրամ
- Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ (FPWC)
- «Երեխաների զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ
- Հայաստանի ֆուլեր տնաշինական կենտրոն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

2020 թվականի ընթացքում Վիվա-ՄՏՍ-ը սոցիալական ներդրումներ է իրականացրել հետևյալ ոլորտներում՝

- Կրթություն
- Մշակույթ
- Շրջակա միջավայրի պահպանություն
- Առողջապահություն
- Տարածաշրջանային զարգացում

Ընդհանուր առմամբ, սոցիալական ներդրումների վրա ծախսվել է 624,573,056.00 ՀՀ դրամ:

Կրթության ոլորտներում ներդրումները ներառել են ՏՏ համաշխարհային մրցանակին, Միկրոէլեկտրոնիկայի միջազգային օլիմպիադային, Հայաստանի ստարթափ ակադեմիայի ծրագրին, «Բարև Բալիկ» նախագծին, Պոլիտեխնիկական համալսարանի «Խելացի լուծումների կենտրոնին» և հասարակության խոցելի շերտերի ուսանողների ուսման վարձի աջակցությունը:

Մշակութային ներդրումների շրջանակում հովանավորվել են «Ոսկե ծիրան» կինոփառատոնը և «Ունիսոն» ՀԿ-ն:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ներդրումներն ուղղվում են Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հետ համատեղ իրականացվող՝ շրջակա միջավայրի պահպանության նախագծերին:

Առողջապահության ոլորտի շրջանակում ներդրումներ են կատարվել «Սորս» հիմնադրամում, «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնում», գյուղական համայնքների խոցելի խավերի դպրոցականներին տրամադրվել են սմարթֆոններ:

Տարածաշրջանային զարգացման շրջանակում ներդրումներ են կատարվել «Հայաստանի ֆուլեր տնաշինական կենտրոնի» ծրագրերում, ինչպես նաև՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրում, որն արտաքին լուսավորությամբ է ապահովում Հայաստանի գյուղական համայնքները:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Վիվա-ՄՏՍ («ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ)

Հասցե
Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, ՀՀ

Հեռախոսահամարներ

Ընդհանուր հարցերի համար՝
+374 60 77 11 11

Զանգերի կենտրոն՝
111, +374 93 29 71 11

Խախտումների վերաբերյալ հաղորդման համար՝
+7 985 765 00 02 (+7 495 765 00 02)

էլ. փոստ

Ընդհանուր հարցերի համար՝
info@mts.am

Զանգերի կենտրոն՝
111@mts.am

Աշխատանքի դիմումների համար՝
jobs@mts.am

Խախտումների վերաբերյալ հաղորդման համար՝
hotline@mts.ru

Կապ սոցցանցերի միջոցով
Facebook: fb.com/MTSArmenia/

Instagram:
instagram.com/vivamts_official_page/

Telegram: t.me/vivamtsofficial

YouTube:
youtube.com/user/MTSArmeniaOfficial

Viber: Վիվա-ՄՏՍ

Կայք

Ներբեռնել App Store-ից

Ներբեռնել Google Play-ից